Արթուր Ավանեսյանի մասին լավ կարծիք ունեմ: Նա դիվիզիայի հետախուզության պետն է եղել, լավ պետ է եղել, լավ կռվող տղա է: Միայն դրականը կարող եմ նրա մասին ասել: Ինչ վերաբերում է ներկայացված ծրագրի 6 կետերին, ես ծանոթ չեմ, չեմ էլ ուզում իմանալ դրանց մասին, քանի որ ես քաղաքականությունով չեմ զբաղվում:

Կարդացեք՝ էջ 4

Օդային տարածքի օգտագործում կարող է լինել ստուգումներ անցկացնելու արդյունքում: Թուրքիան, օրինակ, այդպես է անում: Ոչ մի բեռնատար դեպի Հայաստան եւ Կիպրոս, նաեւ՝ ՀՀ-ից եւ Կիպրոսից, թույլ չի տալիս, բայց երբ Հայաստանից Սիրիա օդային բեռ էին տանում, թողեց, սակայն՝ միայն ստուգումներ անցկացնելուց հետո:

Կարդացեք՝ էջ 5

Գրում են. «պարգեւատրվել է նախարարության կողմից», «իրականացվել է համայնքի կողմից»: Ինչո՞ւ այս ծանր, արհեստական կառույցները, երբ կարելի է գրել պարզ ու հայերեն. «նախարարությունը պարգեւատրեց», «համայնքն իրականացրեց»: Նույնը՝ «շրջանակում»-ի դեպքն է. այն դարձել է յուրաքանչյուր խոսքի պարտադիր հավելում:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 43 (4178), 20 մարտ, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Մի քանի շաբաթ առաջ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը գնացել-հասել է Սաղմոսավանք՝ Տեր Օշին քահանային խրատելու, թե՝ «խելքդ գլուխդ հավաքիր»: Նախորդ օրը պսակադրվել ցանկացող իր ծանոթ զույգից նա իմացել է, որ քահանան ամուսնացողներին ասել է. «Քավորը նորմալ տղա լինի, թասիբով տղա լինի, նկատի ունեմ՝ ՔՊ-ական չլինի»: «Որեւէ քահանա իրավունք չունի եկեղեցում մարդուն խտրականության ենթարկել՝ պայմանավորված վերջինիս քաղաքական հայացքներով կամ կուսակցական պատկանելությամբ, եւ ՀՀ-ում բոլորը, ցանկացած ոլորտում, որը չի ենթադրում քաղաքական հայեցողություն, պարտավոր են խտրականության չենթարկել մարդկանց, եւ բոլոր քահանաները պիտի հիշեն, որ իրենք ծառայում են եկեղեցում ժողովրդին»,- հայտարարել էր ԱԺ փոխնախագահն ու արշավել Սաղմոսավանք: Նա քահանային նաեւ Քրեական օրենսգրքի մասին է հիշեցրել՝ ըստ էության սպառնալով, քանի որ կարծում է, թե քահանան իր պահվածքով պառակտում է սերմանում: Իշխանական կուլիսներում շարունակում են քննարկել փոխխոսնակի պահվածքը: Մեզ ասացին, որ Տեր Օշինը ժամանակին իրականացրել է Ռուբինյանի պսակադրությունը, եւ անգամ ՔՊ թիմում են շատերն ապշել, թե ինչպես կարող էր Ռուբինյանը հաշիվ պահանջել իր ընտանիքի կազմավորմանը հոգեւոր օրհնություն տված քահանայից, որը միջնորդ է Աստծո օրհնությունը փոխանցելու համար: Տեր Օշինը մեզ հետ զրույցում հաստատեց, որ Ռուբինյանի պսակը ժամանակին ինքն է իրականացրել: Հարցրինք՝ Ռուբինյանն այն ժամանակ Քրեական օրենսգիրքն է իրեն հիշեցրել, ինչ-որ պրոցես տեղի ունեցե՞լ է այս շաբաթներին: «Ոչ մի բան էլ տեղի չի ունեցել, ես խաղաղ, հանգիստ ապրում եմ»,- ասաց Տեր Օշինը:

Ներկուսակցական ընտրություններում զեղծարարությունների համար ՔՊ նախընտրական ցուցակից վարչության որոշմամբ հեռացված պատգամավոր Դավիթ Դանիելյանը երեկ լրագրողներին թեեւ վստահեցրեց, թե նեղացած չէ ՔՊ-ից եւ շարունակելու է ճանապարհին իր կուսակցության հետ, սակայն տեղեկացանք, որ անցած շաբաթ ՔՊ-ի՝ Սյունիք այցի ընթացքում նա չի միացել ներկուսակցական քարոզարշավին, ինչպես սովորաբար անում են այլ մարզերից ընտրված պատգամավորները, երբ թիմն իրենց մարզ է այցելում: Ասում են՝ այն օրը, երբ ՔՊ-ն գնացել է Կապան, կուսակցության տեղի տարածքային կառույցի անդամ կապանցի Դավիթ Դանիելյանը շտապել է Երեւան: Ի դեպ, կապանցի Մարինա Ղազարյանը եւս չի միացել թիմին, սակայն ասում են՝ նա Կապանի կառույցից դուրս է եկել եւ տեղափոխվել ՔՊ-ի Մասիվի կառույց:

Իսկական թատրոն

Եթե փորձենք նկարագրել այս իշխանությունների մարտավարությունը՝ ընտրություններին ընդառաջ, ուշագրավ տեսարան կբացվի մեր աչքի առաջ: Մի կողմից, հնարավոր շատ մարդու կաշառել՝ մի քանի հազար դրամ թոշակ բարձրացնելով, մեր հարկերի եւ տուրքերի հաշվին 65-ն անցած մարդկանց անվճար բուժօգնություն ցուցաբերելով: Մյուս կողմից, օգտվելով օրվա կառավարություն լինելու հանգամանքից, շրջագայել մարզերով՝ մարդկանց հետ նկարվել, գրկախառնվել, տնետուն գնալ: Միաժամանակ փիփերթով ճաշ ուտել, կուկուռուզ կրծել՝ ցույց տալով, որ մենք ձեզ նման պարզ մարդիկ ենք՝ 8 տարում չենք կոռումպացվել: Ապա ամբողջ ուժով հակաքարոզչություն անել մրցակիցների դեմ, կանխել նրանց քարոզարշավը, սահմանափակել գործողությունների ազատությունը եւ անհավասար պայմաններ ստեղծել ընտրությունների մասնակիցների համար: Զուգահեռաբար, ինչքան ուժ ունեն՝ վախեցնել պատերազմով, որ եթե մենք չլինենք, Ալիեւը կհարձակվի: Անգամ ադրբեջանական ու ռուսական մամուլում քարոզչություն անելուց զերծ չմնալ: Հետն էլ ցույց տալ, որ իրենց սիրում են Եվրոպայում եւ Ամերիկայում, ընդունում են, սատարում են, չեն թաքցնում իրենց վերաբերմունքը: Նաեւ ամեն գնով տարածել այն կանխատեսումը, թե ինչ-որ ուժերի արգելելու ենք մասնակցել ընտրություններին, եւ եթե արդար ճանապարհով չընտրվենք, կեղծելու ենք, բռնություններ ենք կիրառելու: Ու վերջապես ամենակարեւորը՝ տարբեր հարցումներով, ֆեյքերով ու վճարովի ծառայություններ մատուցողներով հանրությանը ներշնչել, որ «ՔՊ-ն արդեն ընտրված է»: Այս ներշնչանքի բեմականացումներն ուղղակի արդեն զավեշտի են հասնում: Անգամ Նիկոլ Փաշինյանն է զբաղված դրանով՝ ես համոզված եմ, որ Ռուսաստանից ժամանող մեր հայրենակիցները մեզ են ձայն տալու, եւ անգամ՝ լրագրողների 90 տոկոսը:

Նիկոլ Փաշինյանը, որ ընտրություններին ընդառաջ միլիարդավոր պարգեւավճարներով փորձում է պետական ապարատը դարձնել իր հավատարիմ էլեկտորատը, այդպես էլ չի ընկալվում շարքային պետական ծառայողների կողմից, անգամ նրանց կողմից, ովքեր ՔՊ-ին են համակրում: Գերատեսչություններում աշխատող մեր ծանոթները պատմեցին, որ նախարարություններում ակտիվ քննարկում են ՔՊ-ի «ուրախ ավտոբուսը» եւ հատկապես Փաշինյանի անբռնազբոս կերուխումն ուղիղ եթերում, թե ինչպես է երկու կողմով ծամելով՝ կարկանդակ, սուջուխ, լավաշ ուտում: Իրար մեջ փսփսում են, թե երբ ենք խելքը գլխին, լուրջ ղեկավար ունենալու եւ ազատվելու այս կրկեսից: Ի դեպ, ոմանք անգամ կասկածում են, թե Փաշինյանը պահքի մեջ է, որովհետեւ միջին վիճակագրական տնային տնտեսուհին էլ գիտի, որ կարկանդակի՝ նույն պեռաշկու խմորի մեջ նաեւ մածուն են լցնում, իսկ պահքի մենյուում պետք է բացառել կենդանական ծագման սնունդը:

ՀՀԿ-Ն ԻՆՏՐԻԳԸ ՊԱՀՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԻ 4-Ը

Մինչ երրորդ նախագահի ղեկավարած ՀՀԿ-ն պահում է խորհրդարանական ընտրություններին մասնակցել-չմասնակցելու ինտրիգը, կուսակտիվը բազմաբեւեռ վոյաժների մեջ է: ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանն ու Հայկ Մամիջանյանն այս օրերին Բրյուսելում էին, ՀՀԿ ԳՄ անդամ Էդուարդ Շարմազանովը, Տիգրան Աբրահամյանն ու Հենրիխ Դանիելյանն էլ՝ մոսկովյան այցերի: Նրանց որոշ հրապարակումներից հայտնի դարձավ, որ հանդիպում են ունեցել Պետդումայի գործընկերների հետ, մասնակցել են Հանրային խորհրդում կազմակերպված ՀՀ-ՌԴ հարաբերություններին վերաբերյալ քննարկումներին: Իսկ մյուս կուսակցականները շարունակում են ակտիվ մարզային այցեր իրականացնել: Կուսակցականների նման ակտիվությունից կարելի էր ենթադրել, որ համապետական ընտրություններին մասնակցելու են, թեեւ վստահեցնում են, որ որոշում չկա, այս պահի դրությամբ 50/50 է: ՀՀԿ համագումարին՝ ապրիլի 4-ին, թերեւս, կտրվի այդ հարցի պատասխանը: Սակայն մեր աղբյուրները վստահեցնում են, որ այս ընտրությունները ՀՀԿ-ն բաց կթողնի, բայց շատ ակտիվ կլինի այլ ընդդիմադիր ուժերին խանգարելու ուղղությամբ:

ՎՃԻՌ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՏԱՆՋԸ ԴԱՏԱՎՈՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐԵԼ Է, ՈՐ ՀԱՅՈՐԴ SMS ՍՏԱՑՈՂՆ ԻՆՔԸ ՉԼԻՆԻ

Երեկ մենք ստացանք «Նիկոլ Փաշինյանն ընդդեմ «Հրապարակի»» գործով առաջին ատյանի դատարանի վճիռը: Դատավոր Նելլի Հարությունյանն իսկապես «սողոմոնյան վճիռ» է կայացրել՝ փորձելով իր վճռով հասկացնել, որ շատ կուզենար մեր օգտին վճռել, բայց իր ձեռքն ու ոտքը կապված են, ի վերջո՝ հայցվորը ՀՀ վարչապետն է, այն էլ՝ Նիկոլ Փաշինյանը, որը կարող է մի sms-ով աշխատանքից ոչ միայն նախարար ազատել, այլեւ՝ նույն դատավորների վերադաս համարվող ԲԴԽ նախագահին: Այնպես որ, միանգամայն հասկանալի է այդ վճիռը, որով դատավորը փորձել է «ոչ նալին, ոչ մեխին» տարբերակով իրավիճակից դուրս գալ: Ըստ այդմ՝ նա բավարարել է հերքման պահանջը՝ գրելով, որ մեր հարցադրումները ոչ թե հարցեր են, ոչ էլ անգամ քննադատություն, այլ տեղեկատվություն են, որը զրպարտության տարրեր է պարունակում: Բայց նյութական պահանջը՝ 1 միլիոն դրամի, ամբողջությամբ մերժել է, փաստաբանի վարձատրության չափն էլ՝ պահանջել էին 200 հազար դրամ, բավարարել է միայն 100 հազարը:

Մենք վճռից մի քանի հատված ենք առանձնացրել, որտեղ արտացոլված է սույն վճիռը:

«Անդրադառնալով նշված արտահայտությունների գնահատողական դատողություններ հանդիսանալու հանգամանքին՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնված չեն եղել բավարար փաստական հիմքի վրա: Դատարանի գնահատմամբ, հրապարակված տեղեկությունների ճշմարտության եւ հիմնավորվածության համար հրապարակման պահին Պատասխանողը չի ունեցել որոշակի տեղեկություններ, վերջինիս կողմից լրացուցիչ ջանքեր չեն գործադրվել հրապարակված տեղեկությունների ճշմարտացիության եւ հիմնավորվածության պարզմանը: Նշվածը բխում է նաեւ հենց Պատասխանողի կողմից Դատարան ներկայացված դիրքորոշումներից»:

«Ինչ վերաբերում է Պատասխանողի այն փաստարկին, որ Հայցվորն իր ֆեյսբուքյան էջում կատարել է սադրիչ հրապարակումներ, թիրախավորել է եկեղեցուն, հոգեւորականներին, որպիսի իրավիճակում պատշաճ լուսաբանումը, ինչպես նաեւ արժանի քննադատությունն իրականացվել է հոդվածի հրապարակման միջոցով՝ Դատարանն արձանագրում է, որ հրապարակումը եւ դրանում կատարված արտահայտությունները չեն պարունակում քննադատություն Պատասխանողի կողմից որպես «սադրանք» գնահատված հայտարարությունների վերաբերյալ, ավելին՝ դրանք հանդիսանում են Հայցվորի անձնական կյանքին վերաբերող փաստական տվյալներ, հետեւաբար՝ Դատարանը գտնում է, որ Պատասխանողի դիրքորոշումներում վկայակոչված ՄԻԵԴ նախադեպային որոշումները սույն դեպքում կիրառելի չեն, իսկ Պատասխանողի կողմից ներկայացված «սադրանք» պարունակող գրառումները չեն կարող հանդիսանալ այդ փաստարկները հիմնավորող ապացույցներ»:

«Դատարանը, հաշվի առնելով այն, որ նշված ինստիտուտի նպատակը դատական պաշտպանության միջոցով տուժողի խախտված իրավունքների վերականգնումն է, արձանագրում է, որ զրպարտություն համարվող արտահայտությունների փոխհատուցման գումարն իր չափով չպետք է Հայցվորի «հարստացման» միջոց հանդիսանա... հաշվի առնելով, որ Հայցվորը չի ձեռնարկել արտադատական միջոցներ վեճի լուծման նպատակով (հերքում չի պահանջել, որպիսի փաստն ընդունել է նաեւ Հայցվորի ներկայացուցիչը), Պատասխանողի կողմից զրպարտչական տեղեկատվությունը տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, նյութով կիսվել է 70 օգտատեր, գրառումը մեկնաբանել է 29 օգտատեր, արձագանքել՝ 3 օգտատեր, Հայցվորի ներկայացուցիչը թեեւ նշել է, որ նշված հրապարակումը տարածվել է մի շարք լրատվականների կողմից, սակայն չի ներկայացրել նշված փաստը հիմնավորող ապացույցներ, Պատասխանողը հանդիսանում է զանգվածային լրատվության միջոց, կարեւորելով, որ Դատարանի կողմից ընտրված միջոցը պետք է լինի համաչափ, ողջամիտ եւ արդյունավետ, իսկ արդյունավետության սկզբունքը պահանջում է Դատարանի կողմից այնպիսի պատասխանատվության միջոցի կիրառում, որ իրավախախտում, տվյալ դեպքում՝ զրպարտություն կատարած անձը հետագայում խուսափի նման գործողություններից, գտնում է, որ Պատասխանողի կողմից ... հերքում հրապարակելը պետք է բավարար լինի, որպեսզի նա խուսափի նման գործողությունները կրկնելուց, իսկ մյուս պարագայում էլ համապատասխան հերքման հրապարակումը բավարար կլինի Հայցվորի խախտված իրավունքները վերականգնելու համար... ինչի արդյունքում կվերականգնվի Հայցվորի պատվին եւ արժանապատվությանը հասցված վնասը»:

«Դատարանը հարկ է համարում ընդգծել նաեւ, որ թեեւ Հայցվորի կողմից ներկայացվել է նյութական փոխհատուցման պահանջ, սակայն չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ՝ պահանջվող փոխհատուցման գումարի համաչափության եւ ողջամտության վերաբերյալ: Վերոգրյալի հիման վրա Դատարանը, հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, գալիս է այն եզրահանգման, որ Հայցվորի պատվին եւ արժանապատվությանը հասցված վնասը վերականգնելու համար համաչափ, ողջամիտ եւ արդյունավետ միջոց է Պատասխանողի կողմից հերքում հրապարակելը, իսկ պատասխանատվության երկրորդ միջոցի՝ 1.000.000 ՀՀ դրամ գումարի չափով ոչ նյութական վնասի հատուցման պահանջը ենթակա է մերժման»:

Վճիռն այնպիսին է, որ ակնհայտ է՝ դատարանը եւս համոզվել է, որ չկա զրպարտություն, եւ հերքման պահանջը բավարարելը բացատրվում է բացառապես նրանով, որ հայցվորը ՀՀ վարչապետի պաշտոնն է զբաղեցնում: Մենք, անշուշտ, բողոքարկելու ենք այս վճիռը վերաքննիչ դատարանում: Ինքը՝ Փաշինյանը, բազմակի անգամ ավելի սուր հրապարակումներ է արել իր «Հայկական ժամանակում», որոնց համար իրեն դատի չեն տվել, կամ տվել է հազարից մեկը:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԹԵ ԵՎՍ 2-3 ՇԱԲԱԹ ՏԵՎԻ ԻՐԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՄԵՆՔ ԷԼ ԿԶԳԱՆՔ

Իրանի շուրջ ռազմական գործողությունների բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա անխուսափելի է: Ըստ Կենտրոնական բանկի կանխատեսումների, տրանսպորտային եւ լոգիստիկ խնդիրների պատճառով հնարավոր է ապրանքների թանկացում: ՀՀ ԿԲ նախագահը կանխատեսել է 0,5-1,7 տոկոս թանկացում: ԿԲ-ն իրավիճակը գնահատել է որպես բարձր ռիսկային:

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, որը կարծես ՔՊ-ական կառավարության տնտեսական հարցերով գլխավոր «խոսող գլուխն» է, ռիսկերի մասին ասել է, որ այս օրերին նախարարությունն այդ ռիսկերի գնահատմամբ է զբաղված, սակայն չի մանրամասնել, թե ինչ ռիսկերի մասին է խոսքը:

Տնտեսագետ **Ատոմ Մարգարյանն** ավելի կոնկրետ է արտահայտվում. «Իրանի հետ առեւտուրն արդեն հատել է 1 մլրդ դոլարի սահմանագիծը, որի 80 տոկոսը ներմուծումն է Իրանից, եւ մոտ 200 մլն դոլարի արտահանում ունենք: Եթե նայենք լոգիստիկ շղթաներին, գումարային տեսանկյունից առայժմ Իրանի դեմ պատերազմի մեծ ազդեցություն չկա, բայց եթե այն դժվարությունները, որոնք ստեղծվել են բեռնափոխադրումների եւ արտադրական շղթաների խզումների պատճառով, տեւեն եւս 2-3 շաբաթ, ապա կորուստները զգալի կլինեն»:

Արտահանման մեծ մասը կազմում է էլեկտրաէներգիան, որը մատակարարվում է Իրան՝ Երեւանի ՋԷԿ-ի աշխատանքի համար օգտագործվող գազի դիմաց, այսպես ասած՝ «բարտեր» հոսանքը: Իսկ ներմուծվում են մետաղական արտադրանք, սննդամթերք, շինանյութ, տարբեր տեսակի մետաղագործական արտադրանք, հիմնականում՝ արմատուրա, հեղուկ գազ, բիտում եւ այլն: Ատոմ Մարգարյանը հիշեցնում է, որ, բացի դա, Իրանի տարածքով փոխադրվում է Հայաստանի տարացիկ բեռնաշրջանառության մինչեւ քառորդ մասը՝ 20-25 տոկոսը, եւ կարող են էական խնդիրներ ծագել, եթե լոգիստիկ շղթաները խախտվեն, ու հատկապես եթե Բանդարաբասի նավահանգիստը դադարի գործել:

Մյուս վտանգը, ըստ Ատոմ Մարգարյանի, էներգակիրների գների բարձրացումն է: «Գներն արդեն բարձր են: «Բրենդ» տեսակի նավթի բարելն արդեն հատել է 110 դոլարի սահմանագիծը, իսկ դա վաղ թե ուշ բերելու է բենզինի եւ հարակից էներգակիրների գների թանկացման: Հեղուկ գազը եւ նավթամշակման պրոդուկտները կարող են թանկանալ»: Որքանո՞վ: «Եթե մեկ սցենարի՝ կարճաժամկետ պատերազմի դեպքում թանկացումները 3-5 տոկոս են, ապա մատակարարման շղթաների ավելի երկարաժամկետ խզումների դեպքում կարող են այդ ապրանքատեսակների գծով մինչեւ 15-20 տոկոս թանկացումներ լինել, գումարած նավթի ու տրանսպորտային բեռնափոխադրումների սակագների թանկացումը, եւ այս ամենը, իհարկե, կանդրադառնա մեր շուկայի վրա»,- ասում է Ատոմ Մարգարյանը:

Միայն էներգակիրների գների աճն է նկատելի լինելու, թե՞ ամբողջ ապրանքների, այդ թվում՝ սննդամթերքի, առաջին անհրաժեշտության ապրանքների գներն էլ են բարձրանալու: «Էներգակիրներն արդեն թանկացել են, իսկ դրանց թանկացումը բերում է տրանսպորտի թանկացման, եւ նաեւ այլ երկրներից եւս ներկրվող բենզինի ու դիզվառելիքի գների բարձրացումն անխուսափելի է», - նշում է Ատոմ Մարգարյանը: Ըստ նրա, դրանից շահում է Ռուսաստանը, իսկ երկարաժամկետ տուժում են բոլորը:

Տարադրամի փոխարժեքի տատանումները, թեկուզ միջնաժամկետ, նա հնարավոր չի համարում: «ԿԲ-ն ունի բավականին ռեզերվ, արտաքին պահուստներ, որոնք գերազանցում են 5 մլրդ-ն, եւ բացառում եմ, որ փոխարժեքների փոփոխություն լինի, սակայն դոլարի փոխարժեքը կարող է մյուս վալյուտաների նկատմամբ տատանվել, բայց դեռեւս նավթի թանկացումը նման ազդեցություններ չի թողել: ԱՄՆ ֆեդերալ ռեզերվային համակարգը համապատասխան քայլեր է ձեռնարկում, համենայնդեպս, վիզուալ այդպես է, եւ փոխարժեքի առումով կտրուկ թռիչքներ չեն լինի»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Եղեգիսն ու նրա դատվող համայնքապետը

Հակակոռուպցիոն դատարանը շարունակվում է քննել Եղեգիս խոշորացված համայնքի նախկին ղեկավար Արթուր Ստեփանյանի գործը: Հիշեցնենք, որ նա 2017-ի նոյեմբերից եղել է 12 գյուղ միավորող Եղեգիսի համայնքապետը: 2018-ի իշխանափոխությունից հետո համայնքապետի դեմ Եղեգիսում բողոքի ակցիաներ էին անում՝ դժգոհում, որ իրենց 9 ամսվա համայնքապետը խոշորացված 12 գյուղերում որեւէ աշխատանք չի իրականացնում, օրինակ՝ ոռոգման ջուր չունեն: Համայնքապետից դժգոհ բնակիչները շաբաթներ շարունակ փակել էին համայնքապետարանի մուտքը եւ աշխատակիցներին թույլ չէին տալիս մտնել շենք: Բայց նրանց պայքարն արդյունք չտվեց. 2022-ի ՏԻՄ ընտրություններում Արթուր Ստեփանյանը վերընտրվեց իր պաշտոնում՝ ՔՊ ցուցակով, իսկ 2 տարի անց ՔՊական համայնքապետը կալանավորվեց: Նրան մեղադրանք էր առաջադրվել (ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ քրօրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով) այն բանի համար, որ նա, 2017 թ. նոյեմբերի 5-ից զբաղեցնելով Վայոց Ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսանալով պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր իշխանական լիազորություններն օգտագործելով, այլ անձանց օժանդակությամբ, կատարել է առանձնապես խոշոր չափերով իրեն վստահված գույքի հափշտակություն, ինչպես նաեւ՝ պաշտոնեական կեղծիք:

Դատարանը մեղադրյալ Արթուր Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխել էր համակցված այլընտրանքային խափանման միջոցներով՝ կիրառել էր վարչական հսկողություն, գրավ՝ գրավի չափ սահմանելով 3 մլն ՀՀ դրամ, եւ կասեցրել նրա պաշտոնավարումը: Նաեւ արգելել էր Արթուր Ստեփանյանին՝ հաղորդակցվել վարույթին օժանդակող անձանց՝ վկաների եւ մեղադրյալների հետ: Նրան պարտավորեցրել էին շաբաթը մեկ անգամ գրանցվել Եղեգիս համայնքը սպասարկող պրոբացիայի ծառայության համապատասխան մարմնում:

Ստեփանյանի պաշտպան **Սամվել Դիլբանդյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ մեղադրանքն անհիմն է, Արթուր Ստեփանյանը մեղքը չի ընդունել, այս պահին քննվում են ապացույցները: Ի դեպ, 2 տարի է՝ նրա լիազորությունները դադարեցվել են, սակայն համայնքապետարանի կայքում նա որպես համայնքի ղեկավար է ներկայացված: Եղեգիս համայնքի ղեկավարի պարտականությունները դրված են համայնքապետի առաջին տեղակալ Ահարոն Գաբրիելյանի վրա: Բայց առաջիկայում Վայոց Ձորի մարզում կրկին խոշորացում է լինելու, որը ներառելու է Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս համայնքները, ընդհանուր առմամբ՝ 32 բնակավայր:

ԱՐՑԱԽՆ ԱՏՈՂ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿՈՒՎ Է ՏԱԼԻՍ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՔՎԵԻ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՔՐՈՄ

«Արցախ» բառը երկրի երեսից ջնջել-ոչնչացնելու մոլուցքով տառապող Նիկոլ Փաշինյանը Արցախը հանձնելուց երկուսուկես տարի անց՝ նախօրեին, որոշեց վերջապես հանդիպել արցախցիների հետ, ավելի ճիշտ՝ մի խմբի: Եվ արդեն երկու օր է՝ ակտիվ հանրությունը վրդովված քննարկում է Փաշինյանի մասնակցությամբ կայացած այդ հանդիպումը, որը կազմակերպվել էր «Ներառական զարգացում. ձեռքբերումներ եւ անելիքներ» խորագրով համաժողովի անվան տակ: Ամենից շատ քննարկվողը, իհարկե, արցախցի մի տղամարդու շնորհակալական ելույթն էր՝ ուղղված Փաշինյանին ու նրա իշխանությանը: Իսկ համաժողովին մասնակցող վարչապետն ու նախարարները քննարկում էին Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում երեւանամերձ համայնքներում 1 անձի հաշվարկով տրամադրվող գումարը 3 միլիոնից 4 միլիոն դարձնելու հարցը: Տղամարդն էլ հոտնկայս շնորհակալություն էր հայտնում Փաշինյանին՝ նման աննախադեպ հոգատարության համար: Նրա խոսքով՝ եթե պետական աջակցությունը չլիներ, ապա տեղահանվածներից շատերը կարող էին լքել Հայաստանը: Թեեւ մենք գիտենք, որ մեծ թվով արցախցիներ արդեն իսկ լքել են Հայաստանը՝ մեկնելով տարբեր երկրներ: Միեւնույն ժամանակ, քաղաքացին խոսում էր առկա խնդիրների մասին՝ ընդգծելով, որ, օրինակ, Աշտարակ համայնքում բնակարանների գները բարձր են, ինչի պատճառով մարդիկ չեն կարողանում օգտվել բնակապահովման ծրագրերից:

«Մարդկանց մեծամասնությունը ցանկանում է հաստատվել Աշտարակում եւ իրենց ապագան կապել համայնքի հետ: Սակայն 3 միլիոն դրամ սերտիֆիկատը բավարար չէ: Խնդրում ենք վերանայել ծրագիրը եւ այն դարձնել 4 միլիոն դրամ: Էջմիածնում սերտիֆիկատները 4 միլիոն դարձնելուց հետո բավականին շատ ընտանիքներ արդեն բնակարան են ձեռք բերել»,- նշել է նա: Ավելի ուշ պարզ դարձավ, որ Փաշինյանին իր երախտագիտությունը հայտնող արցախցի տղամարդն Արագածոտնի մարզպետի օգնականն է: Մեր աղբյուրներն ասում են, որ մինչեւ ընտրությունները արցախցիների շրջանում «զոնդաժի» ծրագրեր են իրականացվելու, որ հունիսի 7-ի ընտրություններից առաջ վտարանդի դարձած մեր հայրենակիցների թեկուզ մի մասն իրենց ընտրի: Այդ աշխատանքները, ըստ տեղեկությունների, տարվում են երկու ճակատով, մեկը համակարգում է արցախցի հասարակական գործիչ Լիանա Պետրոսյանը, որը ջերմ հարաբերություններ ունի ներկայիս իշխանությունների հետ եւ նախօրեի հանդիպում-համաժողովի կազմակերպիչներից է եղել, թեպետ քիչ թվով մարդկանց է կարողացել հավաքագրել: Մյուսն Անվտանգության խորհրդի քարտուղար, արցախցի Արմեն Գրիգորյանի հորեղբորորդին է՝ Անդրանիկ Գրիգորյանը, որն Արցախում ԱԱԾ օպեր է եղել եւ ավելի շատ կոնտակտ է պահում մարտունեցիների հետ: Պատմեցին, որ իր համերկրացիներին վերջերս անգամ տարել՝ Կիրանցի պատմական պատի հետ է ծանոթացրել:

Լիանա Պետրոսյանին էլ արցախցիները համարում են Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի մարդը, եւ Հայաստանում նույն անուն-ազգանունով քաղաքական «տանիքի» տակ է այժմ նա գործում՝ հանձին Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի: Կոնկրետ Լիանա Պետրոսյանի վրա խնդիր է դրված վտարանդի, հայրենազուրկ արցախցիներին բերել բացառապես սոցիալ-տնտեսական թեմաների տիրույթ եւ մոռացության տալ վերադարձի ու այլ հարցերի, մյուս իրավունքների հետ կապված պահանջատիրությունը: Նույնն էլ Արմեն Գրիգորյանի զարմիկն է անում՝ իր մտերիմների շրջանում զոնդաժ է անում, որ արցախցիներին պրոպագանդեն այս գիծը եւ համոզեն, որ ներկայում Արցախ վերադարձի հարցը ոչ միայն անիրատեսական է, այլեւ՝ վտանգավոր:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Պարզ ասած՝ իշխանությունը մի քանի ուղղությամբ է գործում. փորձում է փողի եւ սիրաշահելու միջոցով իր կողմը բերել արցախցիներին: Ի դեպ, ում կարողացել են իրենց կողմ բերել, շատ արագ ՀՀ քաղաքացիություն են տալիս, որ գնան իրենց ընտրեն, ի տարբերություն մյուսների, որոնք փաստաթղթեր ստանալու դժվարություններ ունեն, իսկ առանց ՀՀ անձնագրի չեն կարողանա ընտրություններին մասնակցել եւ ընդդիմության օգտին քվեարկել:

ՔՊ-Ն ՉԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՈՒՄ՝ ՏԱՐԱԾՔ ՆՈՐՈԳՈՒՄ

Ստեր տեղեկություններով՝ Չարենցավանի ավագանու ՔՊ խմբակցության անդամները նախկին «Գայի շենքի» տարածքում արդեն մի քանի ամիս է՝ ակտիվ վերանորոգման աշխատանքներ են իրականացնում, որ գրասենյակ բացեն: Այդ տարածքը պատկանում է Չարենցավանի համայնքապետարանին: Քանի որ իշխող խմբակցության թուրն աջ ու ձախ կտրում է, մեզ պատմեցին, որ նրանք, օրենքը խախտելով, համայնքապետարանից փորձում են «խլել» այդ տարածքը:

ՔՊ կուսակցության Չարենցավանի գրասենյակի ղեկավար եւ ավագանու անդամ **Արթուր Գալստյանին** հարցրինք՝ ինչ հիմքով եք նախկին «Գայի շենքի» տարածքը վերանորոգում, ՔՊ-ի համար գրասենյակ կամ շտաբ եք բացելու: «Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ այդտեղ շտաբ չի լինի: Մեր շտաբի ցանկը, թե քաղաքի որ մասերում է լինելու, արդեն ուղարկել ենք»: Բայց համայնքապետարանը վարձակալության մրցույթ չի հայտարարել, ոչ էլ տվյալ տարածքը վարձակալած անձ կա, ինչ իրավունքով եք այդ տարածքում վերանորոգման աշխատանքներ կատարում: «Բայց էնտեղ եսիմինչ չի արվել, կռիսանոց էր, աղբ կար՝ հանել մաքրել ենք»: Միայն աղբը չեք մաքրել, նաեւ պատուհաններ եք փոխել, իսկ դա կարող էիք անել այն դեպքում, եթե համայնքապետարանի կողմից այդ տարածքը վարձակալության տրվեր, պայմանագիր կնքվեր, մինչ այդ էլ ավագանին իր համաձայնությունը տված լիներ, ինչ գիտեք, թե ով է այդ տարածքը ձեռք բերելու, որ ամիսներ առաջ սկսել եք բարեկարգել: «Մենք եսիմինչ գումար էլ չենք ծախսել, մեր համայնքում նման տարածքներ եղել են, բարեգործություն արել ենք՝ կարգավորել ենք»: Այսինքն, հիմա բարեգործությամբ եք զբաղված, տարածքը վերանորոգել եք, որ մեկ ուրիշը վայելի: «Երբ ավագանու նիստ լինի, տարածքը կտան վարձակալությամբ, մրցույթ կլինի՝ ում որ Աստված կկամենա, կմասնակցեն, թող տանեն, լավ բաների համար օգտագործեն, ինչ ասեմ: Օրինակ, քաղաքային զբոսայգում ավագանիներով հավաքվել, գնացել ենք 3 սուտկա մաքրություն ենք արել, ինչը ջարդված է եղել, կարգավորել ենք»: Ի դեպ, բարեգործությունն այս փուլում արգելված է, եւ դրա համար օրենքով մեծ պատիժներ են սահմանվել. փաստորեն, Չարենցավանի ՔՊ կառույցում դրա մասին էլ տեղյակ չեն: Թեեւ իրականում բարեգործություն չկա, այլ վստահ են, որ այդ տարածքն իրենց են տալու, նախապես սկսել են աշխատանքներ իրականացնել:

Ի դեպ, Չարենցավանի համայնքապետարանի պաշտոնական կայքից տեղեկացանք, որ այսօր ավագանու հերթական նիստն է լինելու: Օրակարգային հարցերից մեկը վերաբերում է հենց այդ տարածքի հետ կապված մրցույթ հայտարարելուն. «Թույլատրել՝ հայտարարելու մրցույթ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Չարենցավան համայնք, քաղաք Չարենցավան 6-րդ թաղամաս, 16-րդ շենք, թիվ 42 ոչ բնակելի 158.86 քմ մակերեսով շինության համար՝ մեկնարկային գին սահմանելով տարեկան 300 հազար ՀՀ դրամ, մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին»:

Մինչ ՔՊ խմբակցությունն ինքնավստահ հայտարարում է, որ Չարենցավանում 100% ձայն ունի, մեր հարցումները հակառակն են փաստում՝ Չարենցավանն արդեն իսկ մերժել է Փաշինյանին եւ իր խմբակցությանը, երբ նրանք հունվարի 18-ին եկել էին՝ Չարենցավանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում պատարագի մասնակցելու: Այդ օրը Փաշինյանը վախեցավ այն չարենցավանցիներից, որոնք պատրաստվում էին Փաշինյանի այցին ընդառաջ թռուցիկներ բաժանել բնակիչներին՝ «Վերադարձրեք անձնագրայինը», «Մի քանդեք եկեղեցին», «Արցախը Հայաստան է» գրություններով, եւ պատարագի օրն էլ ակցիա անել: Այդ օրը, վաղ առավոտյան ցուցարարներին տներից հավաքել տարել էին ոստիկանություն, ժամեր պահելուց հետո՝ երեկոյան ազատ արձակել:

ՀԳ. *Մենք կհետեւենք, թե այս տարածքի հետ կապված մրցույթը երբ է կայանալու, եւ ով է դառնալու մրցույթի հաղթողը:*

Նյութերը՝ Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ԾՐԱԳԻՐ

ԼԱՎ ԿՌՎՈՂ ՏՂԱ Է, ՄԻԱՅՆ ԴՐԱԿԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՄ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԱՍԵԼ

«Ես 30 տարի ծառայել եմ սահմանին եւ լավ գիտեմ, թե ինչ է նշանակում լինել հայ զինվոր եւ սպա՝ ոչ թե գրքերից, ոչ թե ճառերից, այլ ոտքի տակ եղած հայկական Արցախի հողից, Մռավի ու Օմարի ձյան ցրտից: Ես լավ գիտեմ թշնամու ուժեղ եւ թույլ կողմերը եւ այդ գիտակցությամբ ես հասկանում եմ, որ մեզ պետք է հակառակորդին ճանաչող եւ համապատասխանաբար գործող բանակ». «Ուժեղ Հայաստան» կուսակցության անվտանգության ծրագիրը ներկայացնելիս՝ ասել է անվտանգության հարցերով թիմի ղեկավար Արթուր Ավանեսյանը՝ Կանդազը: «Ուժեղ Հայաստանի անվտանգությունը սկսվում է ոչ թե մեդալներից, այլ՝ կամքից: Հայաստանն ապրում է բարդ ժամանակներում, մեր շուրջ կան ուժեր, որոնք ցանկանում են տեսնել մեզ բաժանված, թույլ, խոնարհված: Արտաքին եւ ներքին սպառնալիքները դեռ չեն նահանջել, ո՞վ է մեր թիվ մեկ թշնամին, ոչ թե հարեւանը, այլ մեր պարտադրված թուլությունը, անզորությունը, անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Սամվել Կարապետյանի մշակած «Ուժեղ խաղաղություն» ծրագրով, մենք առաջարկում ենք հետեւյալ լուծումները.

1. Ներդնել խելացի սահմաններ համալիր համակարգ՝ մարդկային գործոնի ռիսկը նվազեցնելու եւ սահմանների անխոցելիությունն ապահովելու համար: Սահմանագծի ողջ երկայնքով, արհեստական բանականության հիման վրա, սենսորային ցանցերի եւ ինքնավար հարվածային միջոցների տեղակայում:

2. Ստեղծել ռազմական հետախուզության եւ կանխատեսման համակարգ՝ սպառնալիքները վաղ փուլում հայտնաբերելու նպատակով:

3. Զինված ուժերում միասնական կառավարման համակարգի ներդրում, որը կառավարում է օդային, ցամաքային եւ տեղեկատվական տիրույթների համապատասխան գործողությունները:

4. Հայաստանի անկախության համար տեղական ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումը մեզ համար գերակա նպատակ է: Դա մեզ հնարավորություն է տալու նվազեցնելու մեր կախվածությունն այլ երկրներից՝ ճգնաժամային իրավիճակներում, ու, բացի դրանից, ավելի խելամիտ օգտագործել պաշտպանական բյուջեն:

5. Հայաստանի երկինքը լինելու է ամբողջովին պաշտպանված, սա մեզ համար գերակա նպատակ է: Ցավալիորեն, պատմությունը ցույց է տվել, երբ անպաշտպան է Հայաստանի երկինքը՝ անպաշտպան է հայ զինվորով, հակաօդային պաշտպանության համակարգերի, որսիչ դրոնների, հակաօդային հրթիռների, ռեպ համակարգերի, խափանման մեթոդների կիրառմամբ Հայաստանի երկինքը կլինի պաշտպանված:

6. Ինձ համար պատվի հարց է, որ մեր հասարակության մեջ վերականգնվի հայ զինվորի, հայ սպայի պատիվը, հայ զինվորականը միշտ էլ կռվել է առյուծի պես՝ գիտակցելով, որ թիկունքում հայրենիքն է, իր ընտանիքը: Նա չի պարտվել, չի խոնարհվել, չի հանձնվել, քանի դեռ թիկունքից չեն հարվածել նրան: Թույլ ղեկավարի օրոք չենք կարող ունենալ ուժեղ բանակ, նա պարզապես ի վիճակի չէ ուժեղ բանակ կառուցելու: Եղնիկների բանակը՝ առյուծի գլխավորությամբ, կռվում է առյուծի նման, իսկ առյուծների բանակը՝ եղնիկի գլխավորությամբ, փախչում է եղնիկի նման»:

Ընդգծել է, որ բանակը դառնալու է մասնագիտական աճի եւ սոցիալական բարձր կարգավիճակի երաշխավոր՝ հիմնված մարդկային արժանիքների ու տաղանդի արժեւորման վրա: «Զինվորական ծառայությունը պետք է դառնա երկրի ամենամրցունակ մասնագիտություններից մեկը: Ուժեղ բանակն է տեւական խաղաղության ամենահուսալի հիմքը: Անվտանգությունը չի կարող կառուցվել հույսի վրա, այն ունի 2 հենք՝ զինված ուժեր եւ դիվանագիտություն, մեկը մյուսին փոխլրացնելու դեպքում կունենանք ցանկալի արդյունք: Ուժեղ բանակը պատերազմ չի սկսում, այն կանխում է պատերազմը: Ուժեղ խաղաղությունը հնարավոր է միայն ուժեղ բանակի շնորհիվ: Ես մի ամբողջ կյանք անցկացրել եմ սահմանին, եղել են դեպքեր, երբ 1 ամսվա ընթացքում օրական քնել եմ մի քանի րոպե, բայց այդ քունն ամենաարդարն էր: Այսօր ես չեմ կարող հանգիստ քնել, որովհետեւ վտանգված է մայր Հայաստանը: Ես ձեզ խոստանում եմ՝ ամեն որոշում, ամեն ռեֆորմ, ամեն քայլ կատարվելու է մի հարցի պատասխանով՝ արդյո՞ք դա ուժեղ կդարձնի Հայաստանը»,- ասել է Ավանեսյանը:

Մենք գեներալ **Մովսես Հակոբյանին** հարցրինք, թե ինչ կարծիք ունի այս 6 կետից բաղկացած ծրագրի եւ հետախույզ Արթուր Ավանեսյանի մասին: Հակոբյանն ասաց. «Արթուր Ավանեսյանի մասին լավ կարծիք ունեմ: Նա դիվիզիայի հետախուզության պետն է եղել, լավ կռվող տղա է: Միայն դրականը կարող եմ նրա մասին ասել: Լավ հետախուզության պետ է եղել: Ինչ վերաբերում է ներկայացված 6 կետերին, ես դրանց ծանոթ չեմ, չեմ էլ ուզում իմանալ դրանց մասին, քանի որ ես քաղաքականությունով չեմ զբաղվում, ուստի ինձ հետաքրքիր չէ: Իհարկե, եթե փոփոխությունը լինի դրական, լավ կլինի, իսկ եթե՝ ոչ, ապա՝ ոչ, ես քաղաքականությունից հեռու մարդ եմ, չեմ կարող ասել, թե որ ուժին եմ հավատում, սակայն կա մի ուժ, որին ես վստահում եմ»: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչ կարծիքի է Նիկոլ Փաշինյանի երեկվա հայտարարության մասին, թե Ղարաբաղը միշտ էլ եղել է Ադրբեջանի տարածք: «Ես այն մարդը չեմ, որի կարծիքը չի կարող լինել փոփոխական, նրան պետք է հարցնել, թե ինչու է մեկ մի բան ասում, մեկ՝ մի: Ոչ մի քաղաքական հարց ես չեմ ուզում մեկնաբանել»:

Ազատամարտիկ **Սեյրան Չիլինգարյանն** էլ, խոսելով Արթուր Ավանեսյանի եւ նրանց անվտանգային ծրագրի մասին, ասաց. «Արթուրի հետ հանդիպել եմ, բայց որ ասեմ, թե նրան շատ լավ մոտիկից ճանաչում եմ, չէ, ուղղակի գիտեմ, որ նա լավ կռված տղա է.... ինչ վերաբերում է 6 կետից բաղկացած ծրագրին, ապա, իհարկե, ո՞ր հայ մարդը դրական կարծիք չի ունենա ուժեղ բանակ եւ կայուն դիվանագիտություն առաջարկող ծրագրի մասին: Դրական եմ վերաբերվում, թեպետ շատ չեմ էլ խորանում, միայն լսեցի, որ պետությանն օգտակար ծրագրեր ներկայացրին: Սամվել Կարապետյանի գլխին չէր կարելի այդպես սարքել, էն Ռուբեն Վարդանյանին էլ էնտեղ էն օրը գցեցին, մի բարեգործին էստեղ են բանտ մտցրել, մյուսին՝ Բաքվում, չի կարելի էդպես: Չի կարելի էս ժողովրդի հետ էդպես վարվել, փակել, փակել, մինչեւ ո՞ւր: Սխալ է այդպես: Անդադար խոսում են միայն նախկինների սխալների մասին, լավ է, որ կամաց-կամաց մարդիկ սկսում են էդ ամենին չհավատալ: Ես չեմ ասում, թե նախկիններն իդեալական էին կամ ոչ մի սխալ չունեին, չէ, բայց, անկախ նրանց արարքներից, նրանք կռվել են, ես կռվի դաշտի մարդ եմ, ի դեպ, տեսել եմ նաեւ, թե 44-օրյայի ժամանակ՝ Զաբրաիլում ինչքան զենք թողեցին թուրքերին՝ յուղը վրան: Դա ես չեմ կարող ընդունել: Նախկինները կարող է մի բան էլ կերել են, մի բան էլ սխալ են արել, բայց երբեք էդքան զենք չեն թողել թուրքին: 2016 թվականին էլ խփել ենք թուրքին, իսկ 44-օրյա պատերազմը լրիվ այլ թեմա է: Ստեր էին տարածում, թե էս մի տարածքը հանձնված է՝ դուրս եկեք, էն մի տարածքը տված է՝ դուրս եկեք, մի խոսքով.... թուրքին զենք նվիրողները չունեն իրավունք՝ ուրիշի սխալից խոսելու: Թշնամուն էդքան զենք թողեցին, որ ի՞նչ: Հիմա էլ Փիլոյան Անդրանիկ անունով մեկը կա, թողեց եկավ Հայաստան, գեներալի կոչում տվեցին: Դա էլ քիչ էր՝ տվեցին Ազգային հերոսի կոչում, հետո դատապարտվեց.... լավ, ո՞նց կարելի էր ոչինչ չանողին էդքան կոչումներ տալ»:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՈՎՔԵՐ ՆԱՄԱԶ ԵՆ ՈՒԶՈՒՄ, ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԳԻՍՏ ԸՆՏՐԵԼ ՆԻԿՈԼԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հինգշաբթի օրը կառավարության նիստից հետո տեղի ունեցած բրիֆինգի ժամանակ լրագրողների հետ զրույցում եւս մեկ անգամ հայտարարել է, որ Ղարաբաղը երբեք չի եղել Հայաստանի տարածք, ավելին՝ այն մշտապես եղել է ադրբեջանցիներինը: Նիկոլ Փաշինյանն արդեն մի քանի շաբաթ է՝ Արցախի դեմ ագրեսիվ քարոզչություն է տանում, նախ ցեղասպանության թանգարանի տնօրենին հեռացրեց աշխատանքից՝ Արցախի մասին Վենսին գիրք նվիրելու համար, ապա հայտարարեց, որ «Արցախ» եզրույթը պատերազմի ուղիղ կոչ եւ սպառնալիք է: Իսկ Բաքվի բռնապետ Իլհամ Ալիեւը հպարտանում է Արցախը հայաթափելու փաստից եւ հայտարարում, որ հայ ժողովուրդն Ադրբեջանի դարավոր թշնամին է, որին Արցախից վռնդելն ադրբեջանական կողմի մեծագույն ձեռքբերումներից է:

Ռազմական փորձագետ **Դավիթ Զամալյանը**, մեզ հետ զրույցում խոսելով այս ամենի մասին, նկատում է. «Այս մարդն իշխանության է մնացել միայն ու միայն իր արտաքին հովանավորների շնորհիվ: Կորցնելով իր ներքին լեգիտիմությունը՝ նա ապավինում է բացառապես իրեն իշխանության բերած արտաքին ուժերին, որպեսզի կրկին վերարտադրվի: Այս մարդու բառապաշարը թուրքի բառապաշարից ավելի վատ բառապաշար էր: Այս բոլոր հայտարարությունները հերթական անգամ պետք է սթափեցնեն մեզ, եւ պետք է հասարակությունը գիտակցի, որ այս իշխանության վերարտադրման ցանկացած հնարավորություն պարզապես պետք է բացառել: Իսկ ինչ է պետք՝ այն բացառելու համար. ընտրություններին ակտիվ մասնակցել եւ քվեարկել ցանկացած պետականամետ ուժի: Այս մարդու հակաարցախյան նկարագիրն այնքան ակնառու է եւ բացահայտ, որ արդեն ոչ մեկիս չի զարմացնում: Նա չունի արմատներ, փորձում է ոտնատակ տալ մեր ազգային արժեքները: Նա եթե կարողանա վերարտադրվել, ապա մենք անգամ այս պահին, երբ լիարժեքորեն զրկված ենք ինքնիշխանությունից, վերածվելու ենք մի քանի երկրների գաղութի՝ բրիտանական, ամերիկյան եւ այլն, եւ շատ շուտով վերջնականապես կվերածվենք վիլայեթի, իսկ այս մարդը դա չի էլ թաքցնում: Էլ պատրանքի տեղ չկա, ժողովուրդը պետք է հասկանա՝ կա՛մ նամազի հեռանկարն է, կա՛մ արժանապատվության: Նրանք, ովքեր նամազ են ուզում, կարող են հանգիստ ընտրել Նիկոլին: Նա անդադար մեր ժողովրդին սպառնում է պատերազմով: 3 օր առաջ Ալիեւը հայտարարել է, որ Ադրբեջանն օգտագործում է Հայաստանի օդային տարածքը՝ առանց Հայաստանին հարցնելու, իսկ դա նշանակում է, որ մենք կորցրել ենք մեր ինքնիշխանությունը: Եթե Հայաստանն անգամ մեկ տոկոս ինքնիշխանություն ունենար, ապա կկարողանար գոնե իր օդային տարածքը վերահսկել: Հայաստանին այժմ արհամարհում են, իսկ դա նշանակում է, որ Հայաստանն ունի զրո ինքնիշխանություն: Ալիեւը նաեւ հայտարարել է, որ հազար ու մի պատճառ ունեն՝ Հայաստանին չհարգելու, սակայն կտրուկ քայլերի չի դիմում, որպեսզի խաղաղություն լինի: Ուշադրություն, ամենակարեւոր պահը. նա ընդգծել է, որ 6 ամիս անց Ադրբեջանը կարող է փոխել իր դիրքորոշումը: Այսօր վարչապետ կոչեցյալն ասում է, որ Հայաստանի պետականակենտրոն ուժերը՝ ընդդիմությունը, սեպտեմբերյան պատերազմ են ցանկանում. եթե վերհիշենք Ալիեւի ասած ժամկետը եւ Նիկոլի հայտարարությունը, կարող ենք ասել, որ սեպտեմբերին հերթական ողբերգությունն է մեզ սպասվում՝ ծրագրված ողբերգությունը: Այս մարդն այսօրվանից արդեն հանրությանը պատրաստում է այդ ողբերգությանը, ու եթե ինքը վերարտադրվի, այն լինելու է անխուսափելի: Նա նորից մեղադրելու է նախկին իշխանություններին: Որպեսզի մենք այս ամենը կանխենք, պետք է համատարած մերժենք այս մարդուն»:

ԻՐԱՎ

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄՈՒՐՃԻ ՈՒ ԻՐԱՆԱԿԱՆ ՍԱԼԻ ԱՐԱՆՔՈՒՄ

Հայաստանի կամ, ավելի ճիշտ՝ փաշինյանական ռեժիմի ինքնիշխանությունը ենթարկվում է հերթական փորձությանը: Ամերիկյան The Washington Post պարբերականը, հղում անելով ԱՄՆ Պետդեպարտամենտից ստացված հեռագրին, գրում է, որ Պետդեպարտամենտն իր դիվանագետներին հանձնարարել է հորդորել այլ երկրների կառավարություններին՝ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) եւ լիբանանյան «Հեզբոլլահը» ճանաչել որպես ահաբեկչական կազմակերպություններ: Ըստ պարբերականի, «Երկուշաբթի օրը բոլոր ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչություններին ուղարկված հեռագրում Պետդեպարտամենտը հանձնարարել է դիվանագետներին՝ հորդորել ընդունող կառավարություններին՝ ԻՀՊԿ-ն եւ Լիբանանի «Հեզբոլլահը» ճանաչել որպես ահաբեկչական կազմակերպություններ», ընդ որում՝ դիվանագետներն այս ցուցումը պետք է փոխանցեն մինչեւ ուրբաթ օրը, «ամենաբարձր մակարդակով»: Սա նշանակում է, որ երբ դուք կարդում եք այս հոդվածը, Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատարն արդեն Հայաստանի կառավարությանը, իսկ քանի որ կառավարությունը Նիկոլ Փաշինյանն է, հենց նրան է հանձնել ԱՄՆ Պետդեպարտամենտի այս ցուցումը:

Վերադասից ստացված այս ցուցումի հետ ինչպե՞ս պետք է վարվի Հայաստանին ինքնիշխանություն պարգեւած հզոր վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Լիբանանյան «Հեզբոլլահն» այդ պետության առանցքային կառույցներից է, այդ կազմակերպությունը ներկայացված է ինչպես երկրի խորհրդարանում, այնպես էլ կառավարությունում: Այդ կազմակերպությունն ահաբեկչական ճանաչելը կնշանակի հարվածի տակ դնել լիբանանահայությանը: Փաշինյանին, իհարկե, լիբանանահայության ճակատագիրն առանձնապես չի հետաքրքրում, նա օժանդակեց Արցախի հայաթափմանն ու ոչնչացմանը, դրա համեմատությամբ լիբանանահայության ճակատագիրը ոչինչ է: Ավելի բարդ է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հարցը, որը նույնպես Իրանի պետական կառույցներից է՝ամենահզորն ու հարգվածը: ԻՀՊ կորպուսն ահաբեկչական ճանաչելը համարյա նույնն է, որ Իրանի պետությունը որպես ահաբեկչական կազմակերպություն ճանաչես: Մի կողմից, ամերիկյան տերերի ճնշումն է, մյուս կողմից՝ հարեւան Իրանի հետ հետագա հարաբերությունների հարցը: Եթե փաշինյանական ռեժիմը Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ճանաչի ահաբեկչական կազմակերպություն, դա նշանակելու է, որ պետք է համապատասխան միջոցներ կիրառվեն ահաբեկիչներ հռչակված անձանց դեմ, սահմանին հսկվեն, թե արդյոք տվյալ անձն ԻՀՊԿ անդամ չէ՞ կամ ի՞նչ առնչություն ունի այդ կազմակերպության հետ: ԱՄՆ-ն Հայաստանին եւ մյուս երկրներին, փաստացի, Իրանի հետ հակամարտության է մղում: Եթե Իրանից շատ հեռու գտնվող Լիտվայի կամ Էստոնիայի համար դա այնքան էլ մեծ խնդիր չէ, ապա Հայաստանի դեպքում կարող է ունենալ կոնկրետ հետեւանքներ: Որովհետեւ եթե դու Իրանի պետական որեւէ կառույց ճանաչում ես ահաբեկչական, ամենայն հավանականությամբ, դրան ի պատասխան՝ Իրանը փաշինյանական ռեժիմի որեւէ կառույց կամ հենց ռեժիմը կճանաչի ահաբեկչական, դրանից բխող հետեւանքներով:

Թե ինչպիսի որոշում կկայացնի փաշինյանական ռեժիմը, գտնվելով ամերիկյան մուրճի եւ իրանական սալի արանքում, մենք դեռ կտեսնենք: Բայց որ Հայաստանը զրկված է տարրական ինքնիշխանությունից եւ ենթարկվում է ամերիկյան թելադրանքին, արդեն իսկ պարզ է: Մարտի 2-ին Իրանի դեմ ամերիկյան հարձակումից ընդամենը երկու օր հետո Հայաստանի ԱԳՆ-ն հաղորդագրություն տարածեց, ըստ որի՝ Արարատ Միրզոյանը զրույց էր ունեցել Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչիի հետ եւ, ըստ այդ հաղորդագրության, հայտնել է Հայաստանի պատրաստակամությունը՝ այս իրավիճակում ցուցաբերելու ցանկացած անհրաժեշտ հումանիտար օգնություն: Այս հաղորդագրությունից անցել է 18 օր, եւ այդ ընթացքում Հայաստանը պետական մակարդակով չի տրամադրել որեւէ մարդասիրական օժանդակություն: Եվ դա՝ այն դեպքում, երբ չորս օր առաջ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունը մի հայտարարություն տարածեց, ըստ որի՝ «Իրանի Իսլամական Հանրապետության «Կարմիր մահիկ» ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել՝ հրատապության կարգով ստանալու ցանկացած անհրաժեշտ դեղորայք եւ բժշկական պարագաներ անհատներից, ինչպես նաեւ՝ մարդասիրական կազմակերպություններից, բժշկական սարքավորումների մատակարարներից, դեղագործական ընկերություններից եւ փրկարար կազմակերպություններից»:

Հայտարարության իմաստն այն էր, որ Իրանին հրատապ անհրաժեշտ են դեղորայք եւ բժշկական պարագաներ, Արարատ Միրզոյանի ասած «անհրաժեշտության դեպքում»-ը հիշեցիք, չէ՞: Իրանի իշխանությունը, օգնության համար դիմելով Հայաստանի հասարակությանը, Հայաստանի կառավարությանն ասում է, որ դուք ստախոս ստրուկներ եք, դուք այնքան հզոր ու ինքնիշխան եք, որ չեք կարող ձեր տված խոստմանը հավատարիմ լինել եւ մի քանի մեքենա դեղորայք ուղարկել Իրան: Դե ինչպե՞ս կարող է ինքնիշխան Հայաստանը մարդասիրական օգնություն ուղարկել Իրան, եթե այդ դեղորայքը կարող է օգտագործվել որեւէ ահաբեկիչ ԻՀՊԿ անդամի բուժման նպատակով:

Մարտի 2-ից հետո Արարատ Միրզոյանն Աբաս Արաղչիի հետ չի խոսել ու երեւի էլ երբեք էլ չխոսի: Ի՞նչ իմաստ ունի խոսել մի ռեժիմի ներկայացուցչի հետ, որի խոսքն արժեք չունի, որեւէ արժեք չունի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԵԶ ԱՐԳԵԼՈՒՄ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐԵՆՑ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ, ԻՍԿ ՄԵՐՆ ԱԶԱՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ

«Դրապարակի» զրուցակիցն ավիացիայի փորձագետ, Նիկոլ Փաշինյանի նախկին խորհրդական **Հակոբ Ճաղարյանն** է:

- Բաքվի բռնապետը հերթական անգամ նվաստացնելով հայկական կողմին՝ հայտարարել է, որ Ադրբեջանն ազատ օգտագործում է Հայաստանի օդային տարածքները, առանց որեւիցե մեկից թույլտվություն ստանալու եւ համաձայնեցնելու: Քաղաքական տեսանկյունից սա նշանակում է, որ Հայաստանն իր ինքնիշխանությունը կորցրել է, իսկ ավիացիայի տեսանկյունից ի՞նչ է նշանակում:

- Համաձայն միջազգային կարգավորումների՝ երկու ցանկացած երկիր իրար օդային տարածքներ կարող են մտնել եւ օգտագործել անսահմանափակ, եթե, իհարկե, կա փոխադարձ համաձայնություն, եւ չկան միմյանցից պահանջներ: Օրենքն ասում է, որ անխափան փոխադրումներ կարող են լինել երկրորդ երկրի տարածքով, այն կոչվում է ազատության երկրորդ աստիճան, իսկ մյուս կողմից փոխադրումներ կարող են լինել, սակայն յուրաքանչյուր երկիր ինքը պետք է որոշի՝ ինչպես այն կիրառել, ինչ պայմաններով եւ այլն: Այսինքն՝ Ալիեւը, միջազգային կարգավորումներից ելնելով, սխալ բան չի ասում, բայց Հայաստանն օդային տարածքի ցանկացած կիրառում վերցնում է տվյալ երկրի ավիացիոն իշխանության կողմից. ի դեպ, այսպիսի որոշումները տալիս են հենց ավիացիոն իշխանությունները, որն էլ համաձայնության է գալիս զինվորական սեկտի հետ: Նրանք համատեղ գործող ձեռնարկություններ են: Եթե Հայաստանը չի դնում խնդիրներ Ադրբեջանի առաջ եւ ասում է՝ կարող ես անխափան իմ օդային տարածքներն ուզածիդ չափ օգտագործել, ապա ադրբեջանական կողմը դա կարող է շատ հանգիստ անել, սակայն Հայաստանն իրավասու է՝ կիրառելու համապատասխան միջոցներ՝ իր օդային տարածքները վերահսկելու համար, որպեսզի ով ոնց ուզի, չկարողանա օգտագործել այն: Համաձայն միջազգային կարգավորումների՝ սեւով սպիտակի վրա գրված է, որ ցանկացած տրանզիտային թռիչք, օդային տարածքի օգտագործում կարող են լինել որեւիցե օդանավակայանում վայրէջք կատարելուց հետո՝ ստուգումներ անցկացնելու արդյունքում: Թուրքիան, օրինակ, այդպես է անում: Ոչ մի բեռնատար դեպի Հայաստան եւ դեպի Կիպրոս, ինչպես նաեւ՝ ՀՀ-ից եւ Կիպրոսից, թույլ չի տալիս, բայց, օրինակ, երբ Հայաստանից Սիրիա օդային բեռ էին տանում, Թուրքիան թողեց, սակայն՝ միայն ստուգումներ անցկացնելուց հետո: Ինչու եմ այս օրինակները բերում, որովհետեւ այս ամենը մտնում է պետության իրավունքների մեջ: Հայաստանում ավիացիոն իշխանությունները կառավարության մասն են կազմում եւ ինքնուրույն որոշումներ չեն կարողանում կայացնել: Եթե Փաշինյանը որոշել է, որ Ադրբեջանը պետք է Հայաստանի օդային տարածքն անխափան օգտագործի, ապա ավիացիոն իշխանությունները հակառակ կարծիք հայտնելու իրավունք չունեն, եւ նորից կրկնեմ՝ այս ամենը համաձայնեցված է պաշտպանական համակարգի հետ:

- Այսինքն՝ սա Նիկոլ Փաշինյանի հերթական «խաղաղասիրության» արդյունքն է:

- Այո, միանշանակ:

- Իսկ Հայաստանը կարո՞ղ է Ադրբեջանի օդային տարածքով ազատ ելումուտ անել, դե, եթե խաղաղություն է, ապա պետք է դա լինի երկկողմանի:

- Ոչ, Հայաստանը ելումուտ չի անում Ադրբեջանի տարածքով: Վերջերս մեկ թռիչք էր կատարվել դեպի Օման՝ ԱՄԷ-ից ուղեւորներ բերելու նպատակով, միայն այդ մեկ դեպքն է եղել, որ անցել է Ադրբեջանի տարածքով, բայց ոչ առանց Ադրբեջանի թույլտվությամբ, իսկ առհասարակ Հայաստանն Ադրբեջանի օդային տարածքները չի օգտագործում, մուտք չեն գործում: 2022 թվականից, երբ Ռուսաստանի հարավային օդային տարածքները փակ են, մեր օդանավերը գնում են Վրաստան, Դաղստան, Կասպից ծովի վրայով հասնում են Աստրախան կամ Ղազախստան: Բայց ամենահարմար ճանապարհը կլիներ Ադրբեջանի տարածքն օգտագործելը, սակայն մեր օդանավերն այն չեն օգտագործում, որովհետեւ Ադրբեջանն մեր օդանավերին կստիպի վայրէջք կատարել եւ միայն համապատասխան ստուգումներից հետո բաց թողնել, ինչն էական բարդություններ է առաջացնում, եւ դա շատ նորմալ է, քանի որ այդ ամենը մտնում է պետության իրավունքների մեջ, եթե Փաշինյանը վախկոտ է, դա չի նշանակում, թե բոլորը պետք է վախկոտ լինեն.... միջազգային կարգավորումները հստակ ասում են՝ կարող ես ստուգել, կարող ես ազատ թողնել: Եթե նրանք մեզ ազատ չեն թողնում, դա Ալիեւի լկտիության եւ ցռան Նիկոլի գործողությունների արդյունքն է: Մեզ արգելում են օգտագործել իրենց օդային տարածքը, իսկ մեր օդային տարածքներն ազատ օգտագործում են:

- Ունե՞ք տեղեկություններ, թե հայկական ավիացիան երբ վերջապես դուրս կգա ԵՄ սեւ ցուցակից:

- Չունեմ տեղեկություններ: Ես ավիացիոն իշխանությունների հետ չունեմ որեւէ առնչություն, սակայն այդ հարցը պետք է պարզաբանվի եւս մեկ անգամ՝ նրանց կողմից, քանի որ այն գաղտնիք չէ, իսկ հանրությունը հետաքրքրված է այդ թեմայով: Պետք է հստակ բացատրեն, թե ինչ փուլում է այդ գործընթացը, եւ ուր ենք հասել: Դա իրենց պարտականությունն է: Անգամ այն մարդիկ, ովքեր դրա կարեւորությունը մեծ հաշվով չեն հասկանում, միեւնույն է՝ այդ հարցով հետաքրքրված են, քանի որ այն շատ կարեւոր հարց է:

- Իսկ այս տարիներին ավիաընկերությունների թիվը նվազե՞լ է:

- Ոչ, պարզապես FlyOne Armenia-ն ընդլայնվել է, ընդարձակվել, եւ դա շատ լավ է: Մյուս ընդլայնվող ընկերությունն էլ նախկին «Ֆլայ Արմենիան» է, որը հիմա փոխել է իր անվանումը: Մյուս խոշոր խաղացողն էլ հանդես է գալիս «Շիրակ» անվանումով, մի խոսքով՝ կրճատումներ ոլորտում չկան....

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԵԲԵԴ

ԳԵՏԵՐԸ ԺԱՄԱՆԱԿ ՉՈՒՆԵՆ ՍՊԱՍԵԼՈՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻՆ

«Հրապարակ» օրաթերթի մարտի 4-ի համարում «Այդ փողը եթե Դեբեդի մեջ լցնեին, լիճ կգոյանար, գոնե ձուկ կբռնեինք» հոդվածով խոսել էի Դեբեդի գետավազանի ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների մասին: Ապա նաեւ մի շարք հարցերի պարզաբանման նպատակով հարցում արեցի շրջակա միջավայրի պահպանության նախարարություն՝ հոդվածի կրկնօրինակն ուղարկելով նրանց: Ստացա նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի ստորագրությամբ պատասխան, որն ընդհանուր բառերով ասած՝ նշանակում էր, որ նախարարությունում բոլոր հիմնահարցերի մասին տեղյակ են, բայց... «նոր են ցրցամ տալիս, թե որ կարեն»:

Լոռու մայր գետը՝ Դեբեդը, ոչ միայն բնության, այլ նաեւ պետական կառավարման հայելին է: Այն, ինչ տեղի է ունենում գետի հետ, ուղիղ արտացոլումն է այն բանի, թե ինչ պատասխանատվությամբ եւ ինչպես են վերաբերվում մեր հարստությանը, մեր երկրին: Հոդվածում մի շարք կոնկրետ, տարիներով կուտակված խնդիրներ էինք բարձրացրել՝ ջրի աղտոտումից մինչեւ կոյուղու համակարգերի փլուզում, ոռոգման ցանցերի անգործություն, փոքր ՀԷԿ-երի անկանոն կառուցում, սելավների վտանգ եւ պետական անգործություն: Խնդրել էինք հստակ պատասխաններ, թվեր, ժամկետներ եւ պատասխանատուների անուններ հնչեցնել, փոխարենը ստացանք մի պատասխան, որը ձեւական գրագրություն է՝ ոչինչ չասող:

Պատասխանի առանցքն այն է, որ «մշակվում է առաջին ջրավազանային կառավարման պլանը»: Զարմանալի է՝ իսկ ինչո՞ւ է այն դեռ «մշակվում»: Եթե ընդունենք, որ վերջին 7-8 տարիներին ոլորտը եղել է նույն կառավարման պատասխանատվության ներքո, ապա ինչո՞վ էին զբաղված այս տարիներին: Ջրային ռեսուրսների կառավարումը նոր ոլո՞րտ է: Այն ռազմավարական նշանակության հարց է, որի շուրջ աշխատանքները պետք է վաղուց ավարտված լինեին, ոչ թե՝ նոր սկսվեին:

«Առաջին պլան» ձեւակերպումն ինքնին խոստովանություն է՝ մինչ այս որեւէ լիարժեք պլան չի եղել կամ չի գործել: Իսկ եթե չի եղել, ապա ո՞վ է պատասխանատու դրա համար: Եթե եղել է, ինչո՞ւ չի հիշատակվում դրա արդյունքը: Պատասխանում բացակայում է ամենակարեւորը՝ գնահատականը: Չկա խոսք այն մասին, թե արդյոք հոդվածում ներկայացված խնդիրները համապատասխանո՞ւմ են իրականությանը: Ո՛չ հերքում են, ո՛չ հաստատում, ո՛չ պարզաբանում: Փաստերը պարզապես շրջանցել են՝ գլուխներն ազատելով ընդհանուր բնույթի ձեւակերպումներով: Օրինակ՝ նշվում է, որ իրականացվում են գետերի հուների մաքրման աշխատանքներ, սակայն չի նշվում՝ կոնկրետ որ հատվածներում, ինչ ծավալով, ինչ արդյունքով: Չկան տվյալներ, չկա հաշվետվություն: Սա այն դեպքն է, երբ «աշխատանք է կատարվում» արտահայտությունը դատարկ բառերի շարք է: Մինչդեռ իրականությունը շատ ավելի «դրամատիկ» է. Դեբեդի ավազանում տարիներ շարունակ կուտակվել են բնապահպանական խնդիրներ՝ արդյունաբերական եւ կենցաղային կեղտաջրերի չմաքրված արտահոսք, քայքայված մաքրման կայաններ, ջրային ցանցերի մաշվածություն, ոռոգման համակարգերի փաստացի անգործություն: Գյուղացին ջուր չունի՝ իր հողը մշակելու համար, իսկ գետը, որ պետք է կյանք տա, ինքն է դարձել վտանգի աղբյուր: Ավելին՝ վերջին տարիների սելավներն ու վարարումները ցույց տվեցին, թե որքան խոցելի է գետի ավազանը: Քանդված ճանապարհներ, ավերված կամուրջներ, վնասված տներ ու այգիներ: Սա արդեն ոչ միայն բնապահպանական, այլ նաեւ անվտանգային խնդիր է: Եվ այս ֆոնին նախարարությունը նոր-նոր «պլան է մշակում»: Մինչդեռ պետական կառավարման տրամաբանությունը պետք է լինի հակառակը՝ գնահատել կատարվածը, արձանագրել բացթողումները, մշակել հստակ գործողությունների ծրագիր՝ ժամկետներով եւ պատասխանատուներով: Այլապես ցանկացած «պլան» կմնա թղթի վրա, ինչպես մնացել են նախորդ բազմաթիվ ծրագրերը, որոնց մասին հիշատակվում է նաեւ հոդվածում:

Հասարակությունն իրավունք ունի իմանալու՝ ինչ է արվել վերջին տարիներին, ինչ արդյունք է տվել արվածը, ինչ չի արվել եւ ինչու: Դեբեդը չի կարող սպասել հերթական «ծրագրային փաթեթին» կամ «մշակման փուլին»: Բնությունը չի աշխատում վարչական ժամկետներով: Եթե այսօր չկան կանխարգելիչ միջոցառումներ, վաղը լինելու են նոր աղետներ: Երբ գետը դուրս է գալիս հուից, չի հարցնում՝ պլանը հաստատվա՞ծ է, թե՞ դեռ մշակման փուլում է: Պետական կառավարման արդյունավետությունը չափվում է ոչ թե ձեւակերպումներով, այլ՝ արդյունքով: Իսկ Դեբեդի պարագայում այդ արդյունքը դեռ չի երեւում:

Այս հարցը միայն Լոռու մասին չէ: Սա վերաբերում է ամբողջ երկրին: Ջուրը ռեսուրս է, որը կամ կառավարվում է խելամիտ, կամ դառնում է «փորձանք»: Եվ հիմա արդեն ժամանակն է ոչ թե խոսելու «կկատարվի», «կմշակվի», «կնպաստի» ձեւակերպումներով, այլ պատասխանելու պարզ հարցին՝ ինչո՞ւ մինչեւ հիմա չի արվել:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լարիջանիի սպանությունը շատ ցավոտ է Իրանի համար

Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի ղեկավար Ալի Լարիջանիի սպանությունը շատ ցավոտ է Իրանի համար: Հիշեցնենք, որ նա զոհվել էր իսրայելական հարվածների հետեւանքով՝ որդու եւ թիկնապահների հետ: Քաղաքագետ Դմիտրի Բրիջեն կարծում է, որ Լարիջանիի լիկվիդացումը նշանակում է ոչ միայն եւս մեկ իրանցի բարձրաստիճան պաշտոնյայի ոչնչացում, այլեւ հարված է իրանական պետական համակարգին, որտեղ Լարիջանին կարեւոր դերակատարում ուներ ներքին կառավարման, ԱՄՆ-ի հետ բանակցությունների անցկացման եւ պատերազմական գործողությունների հարցում: Քաղաքագետը նկատում է, որ Լարիջանին իրանական քաղաքական վերնախավի ամենաազդեցիկ դեմքերից էր, հետեւաբար՝ նրա կորուստը շատ ցավոտ է Իրանի համար: Սիմվոլ լինելուց բացի, նա նաեւ համակարգային կարեւոր ֆակտոր էր, ազդեցություն ուներ ողջ համակարգի վրա եւ կարող էր ԱՄՆ-ի հետ հնարավոր բանակցություններում միջնորդ դառնալ: Այս ամենից բացի, գործող վարչակարգի կայունությունն ապահովվում էր նաեւ նրա միջոցով: Լարիջանիի նման ֆիգուրներին վերացնելով, ըստ Բրիջեի, հնարավոր բանակցությունները Թեհրանի եւ ԱՄՆ-Իսրայել տանդեմի միջեւ ավելի են հեռանում, եւ դա կարծես արվում է միտումնավոր: Բանակցությունների համար պետք կլինի վերնախավի ծանր քաշային ազդեցիկ անձ, որն իր մեջ կհամադրի գաղափարական հուսալիությունն ու կշիռը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՐԲԱԶԱՆԸ ՏԱՐԱԾՔԸ ԳՆԵԼ Է ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՑ

ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջում է 2017-ին Բագրատ սրբազանին 400 հազար դրամով օտարված հատուկ նշանակության տարածքը, այդ թվում՝ զորանոցը, վերադարձնել Հայաստանի Հանրապետությանը: Ըստ դատախազության. «2023 թվականի հունիսի 9-ին նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվել է, որ պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման ամրացված՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր գյուղի 2-րդ փողոցի 1-ին նրբանցքում գտնվող՝ 1198.09 քմ մակերեսով անշարժ գույքը, որից զորանոցը՝ 621.81 քմ, բնակելի շինությունը՝ 121.77 քմ, քարե շինությունը՝ 66.16 քմ, ճաշարանը՝ 225.7 քմ, պահեստը՝ 39.65 քմ, փայտե տնակը՝ 48 քմ, լոգարանը՝ 27 քմ, փայտե տնակը՝ 48 քմ, եւ հատուկ նշանակության 6.0536 հա հողամասը 2014 թվականի հուլիսի 24-ի պայմանագրով, 8.717.184 դրամով օտարվել է Ա. Ս.-ին: Հետագայում, 2017 թվականի հուլիսի 17-ին, Ա. Ս.-ն նշված հատուկ նշանակության հողատարածքը եւ շինությունները, այդ թվում՝ զորանոցը, ընդամենը 400.000 դրամով օտարել է Վ. Գ.-ին: Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2014 թվականի հուլիսի 4-ին տրված միասնական տեղեկանքի եւ Վ. Գ.-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վկայակոչած պայմանագրով օտարված հողամասն օտարման պահին եւ առայսօր, ըստ նպատակային նշանակության, հանդիսանում է հատուկ նշանակության հողամաս»:

Բագրատ սրբազանի փաստաբան Տաթեւիկ Սողոյանն այդ գործի մասին ասել է. «Այսպես, ուրեմն, Տավուշի սահմանամերձ Նավուր գյուղում 9 տարի առաջ Բագրատ սրբազանին երրորդ անձից սեփականության իրավունքով փոխանցվել է հողատարածք, որի վրա հետագայում սրբազանի ընկերների համատեղ ջանքերով եւ վարկային միջոցների ներգրավմամբ կառուցվել է գյուղատնտեսական ֆերմա եւ մսամթերքի արտադրություն՝ առաջնահերթ համայնքի զբաղվածության հարցը լուծելու համար (հայտնի «Բիչինայի» արտադրությունը. Շամշադինի բարբառով վետչինա է նշանակում՝ Ո. Ս.): 2020թ. քովիդի եւ պատերազմի ճգնաժամի հետեւանքով ֆերմայի գործունեությունը եւ արտադրությունը կասեցվել են: Իսկ վարկային միջոցների սպասարկման բեռը դեռեւս կրում է Բագրատ սրբազանը: 2023թ. դատախազությունը դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել այն գործարքը, որով ի սկզբանե՝2014թ., պետությունից հողատարածքն օտարվել էր երրորդ անձին, եւ վերադարձնել այդ գույքը պետությանը: Բագրատ սրբազանը՝ որպես բարեխիղճ ձեռքբերող, իսկ «Տավուշ էկո միթ» ընկերությունը որպես ներդրում իրականացրած ձեռնարկություն գործում ներգրավվել են որպես երրորդ անձինք: 2025թ. դեկտեմբերին հակակոռուպցիոն դատարանի վճռով հայցը մերժվել է՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Վճիռն օրինական ուժի մեջ չի մտել, քանի որ դատախազությունը բողոքարկել է այն: Այդուհանդերձ, հասկանալով, որ այդ գործը հեռանկար չունի (դե, քանի որ դատախազության սխալները գործում բազմաթիվ են), դատախազը չի սպասել վերաքննիչ դատարանի որոշմանը: Որոշել է նույն հարցը, ավելի ճիշտ՝ նույն նպատակը՝ Բագրատ սրբազանին ունեզրկելը, կրկին հայցել դատարանից»:

Նավուր գյուղից տեղեկացա, որ այդ տարածքը խորհրդային տարիներին եղել է հակակարկտային կայան, Հայաստանի անկախացումից հետո դարձել է զորամաս, որը հետո դադարել է այդ տարածքում գործել: Գլխավոր դատախազության հաղորդագրության մեջ նշված Ա. Ս.-ն, որին 2014 թ. հուլիսի 24-ի պայմանագրով 8.717.184 դրամով օտարվել է այս տարածքը, որը 2017 թ. հուլիսի 17-ին տարածքը 400 հազար դրամով օտարել է Բագրատ սրբազանին, եղել է այդ զորամասի հրամանատարը: Նավուրից մեզ ասացին նաեւ, որ «Տավուշ էկո միթ» ընկերության վետչինայի արտադրամասը չէր կարող բիզնես հաջողություններ ունենալ, քանի որ արտադրամաս այցելող բազմաթիվ հյուրերին այդտեղ ճոխ հյուրասիրում էին իրենց համեղ արտադրանքով:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵԶՈՒ

«ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ 660 ՄԼՆ ԴՐԱՄ Է, ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 3 ԿԻԼՈՄԵՏՐ». ԼԵԶՈՒՆ ՄԻՏՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ Է

Բավական է բացել որեւէ մարզպետարանի կամ համայնքապետարանի կայքը, եւ առաջին իսկ տողերից պարզ կդառնա, որ այստեղ այնքան էլ չեն մտածել, թե ինչ են գրում եւ ինչպես են գրում: Ահա մի օրինակ Լոռու մարզպետարանի կայքէջից. «Ծրագրի արժեքը 660 մլն դրամ է, երկարությունը՝ 3 կմ»:

Թվում է՝ պարզ նախադասություն է, բայց սա լեզվական սխալ է: «Ծրագրի երկարությունը՝ 3 կիլոմետր». արդյո՞ք սա պարզապես վրիպակ է, թե՞ մտածողության անփութություն: Նույն նյութում կարդում ենք. «Վայելեք օր-օրի ծաղկող Վանաձորը: Երեւանյան փողոցն է՝ նախկինում եւ հիմա. մարդաբոյ փոսերով եւ ասֆալտապատված, գծանշված»: Ի՞նչ է նշանակում «մարդաբոյ փոսերով եւ ասֆալտապատված». սա համեմատությո՞ւն է, հակադրությո՞ւն, թե՞ բառերի պատահական ընտրություն: Կարդալուց հետո նույնիսկ չես ուզում վայելել «օր-օրի ծաղկող Վանաձորը»: Անփութությունն այստեղ չի ավարտվում: Մեկ այլ հաղորդագրության մեջ նշվում է. «1 մլն դոլար կամ 395 մլն դրամ», այն դեպքում, երբ ակնհայտ է՝ թվերը չեն համապատասխանում: Սա արդեն ոչ միայն լեզվի, այլ նաեւ բովանդակության նկատմամբ է անտարբերություն: Ո՞վ է ստուգում այս նյութերը: Ո՞վ է պատասխանատու:

Սրանք առանձին «գոհարներ» են՝ ինչ-որ առիթով ինչ-որ մեկի թարգմանած նյութերը, որոնք առանց ջանք գործադրելու մեզ մատուցվում են՝ սեփական լրատվությունն ամբողջացնելու նպատակով: Դրանք ոչ թե հայերեն են, այլ՝ օտար լեզվի բառացի պատճեն՝ հայերեն բառերով: Օրինակ՝ Վանաձորի համայնքապետարանի կայքէջում կարդում ենք՝ «համաստեղծման հանդիպում բաց տարածք մեթոդով»: Սա ի՞նչ է նշանակում: Ո՞նց կարող է տարածքը մեթոդ լինել: Սա ակնհայտորեն անգլերեն open space method-ի չմարսված փոխադրությունն է: Բայց նյութ հրապարակողը պարտավոր էր հասկանալ, գաղափարը փոխանցել հայերեն մտածողությամբ: Փոխարենը՝ ստացել ենք մի նախադասություն, որը ոչինչ չի ասում ընթերցողին: Նույն նյութից իմանում ենք, որ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցած այդ անհասկանալի «Բաց տարածք» մեթոդով կայացել է «համաստեղծման հանդիպում՝ «նվիրված Վանաձոր համայնքի Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակում գործողությունների ծրագրի վերանայմանը»: Այս անհեթեթ բառերի շարանից որեւէ բան հասկացմ՞ք: Եթե գրողը հասկանում է ինչ-որ բան, ապա նրան հարկավոր էր իմաստը հասկանալի փոխանցել մարդկանց՝ նորմալ հայերեն նախադասություններով, իսկ վերահսկողը պիտի ընթերցեր՝ մինչեւ լուրը հրապարակման թույլատրելը, մինչեւ «Նախաձեռնության շրջանակում գործողությունների ծրագրի վերանայումը»:

«ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից», «նախարարության կողմից». այս՝ «կողմից» կցված ձեւերը ոչ միայն տգեղ են, այլեւ խախտում են լեզվի բնական հոսքը: Սա ուղղակի տառացի պատճենն է ռուսական շարադասության: Ահա՝ «կողմից» եւ «շրջանակում» բառերն ինքնըստինքյան դառնում են լեզվական մոլուցքի ապացույց: Ժամանակակից պաշտոնական լեզվում առանձնահատուկ «սեր» կա նաեւ «շրջանակում» բառի նկատմամբ: Գրում են. «պարգեւատրվել է նախարարության կողմից», «իրականացվել է համայնքի կողմից»: Ինչո՞ւ այս ծանր, արհեստական կառույցները, երբ կարելի է գրել պարզ ու հայերեն. «նախարարությունը պարգեւատրեց», «համայնքն իրականացրեց»: Նույնը «շրջանակում»-ի դեպքում է. այն դարձել է գրեթե յուրաքանչյուր նախադասության պարտադիր հավելում. «ծրագրի շրջանակում», «նախաձեռնության շրջանակում», «հանդիպումների շրջանակում»: Մինչդեռ շատ դեպքերում այն պարզապես ավելորդ է կամ կարելի է փոխարինել բնական «ծրագրով», «այս ծրագրի ընթացքում», «հանդիպումների ժամանակ» ձեւերով: Կա նաեւ մեկ այլ խնդիր՝ երկար, ծանր, դատարկ նախադասություններ: Օրինակ՝ «հանդիպումների արդյունքները կամփոփվեն եւ կդառնան ռազմավարական առաջնահերթությունների հիմքը՝ միտված համայնքի սոցիալական կայուն զարգացմանն ու բնակիչների կյանքի որակի բարելավմանը»: Առաջին հայացքից՝ լուրջ միտք է: Բայց իրականում բառերի կույտ է, որտեղ կոնկրետ ասելիք չկա: Ի՞նչ արդյունքներ: Ի՞նչ առաջնահերթություններ: Ի՞նչ գործողություններ: Նույնը կարելի է տեսնել «միջազգային ֆորումների» մասին նյութերում, որտեղ նախադասությունները լցված են «ներառականություն», «ներգրավվածություն», «ցանցային փոխգործակցություն» բառերով, բայց ընթերցողը չի հասկանում, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Այս ոճը պատահական չէ՝ համակարգային խնդիր է. երբ պաշտոնական կայքում հայտնվում է՝ «դրամաշնորհի կողմից տրամադրվել է գումար», հարց է առաջանում՝ արդյո՞ք գրողը չի հասկանում, որ «կողմից»-ը կարող է լինել միայն անձ կամ կազմակերպություն, ոչ թե «դրամաշնորհ»-ը: Մեկ այլ «գոհար» կարդանք. «Մասնակիցների համոզմամբ՝ նման ձեւաչափով համատեղ աշխատանքը նպաստում է համայնքային կառավարման բացությանը եւ համայնքի զարգացման համար ստեղծում բնակիչների եւ տեղական իշխանությունների համատեղ պատասխանատվության մշակույթ»: Հմայվե՞ք նք «Կառավարման բացությանը» բառակույտով, սիրով ընդունե՞նք գրեթե ոչինչ չասող այս նախադասության «կառուցիկությունը»: Թող գրողները եւ մեր ընթերցողները որոշեն:

Երբ նույն տեքստում բառերը կցվում են իրար, թվերը չեն համընկնում, նախադասությունները չեն կառուցվում, հասկանալի չեն, նշանակում է՝ ոչ ոք չի խմբագրել, ոչ ոք չի կարդացել եւ ոչ ոք պատասխանատվություն չի կրում: Իսկ այդ նյութերը կարդում են հազարավոր մարդիկ: Լեզուն պարզապես հաղորդակցման միջոց չէ: Դա պետականության, մշակույթի եւ մտածողության արտահայտություն է: Երբ պաշտոնական մակարդակում այն աղավաղվում է, ազդում է ոչ միայն ընթերցողի ընկալման, այլեւ հասարակության ընդհանուր լեզվամտածողության վրա: Եթե մենք անտարբեր ենք մեր լեզվի նկատմամբ անգամ պաշտոնական հարթակներում, ապա ինչպե՞ս կարող ենք պահանջել լեզվական մշակույթ հասարակությունից: Լավ, ճիշտ գրելն «ավելորդ ճոխություն» չէ, դա նվազագույն հարգանք է ընթերցողի հանդեպ:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄԱՐԻԱ ՍՏՅՈՒԱՐՏ. ՈՂԲԵՐԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՌԵԱԼԻԶՄԻ ԵՎ ՄԻՖԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

Միջնադարյան Եվրոպայի ամենահետաքրքիր պատմական կերպարներից մեկը, անխոս, Շոտլանդիայի թագուհի Մարիա Ստյուարտն է (1542-1587)՝ հակասական կերպար, պարուրված միֆականությամբ, որը հաճախ է ժամանակի գրողների եւ ռեժիսորների ստեղծագործական ներշնչանքի աղբյուր հանդիսացել: Ստեֆան Ցվայգը, օրինակ, առանձին մենագրություն ունի նրա մասին՝ վիպականացված կենսապատումի ժանրում: Մարիայի կերպարը նաեւ կինոյում է բավականին արծարծվել՝ կինոարվեստի ավելի քան մեկդարյա պատմության ընթացքում:

Նրա ողբերգական կերպարը, իշխանության համար պայքարը, անձնական կյանքի դրամաներն ու ժամանակի կրոնական հակասությունները, ինչ խոսք, սիրված թեմաներ են ցանկացած կինոռեժիսորի համար: Այս առումով, հատկապես ուշագրավ է նրա եւ զարմուհու՝ անգլիական Եղիսաբեթ 1-ին թագուհու պայքարը: Ու այս ամենի համադրությամբ էլ ծնվել է ողբերգական ճակատագրով այս կնոջ (գլխատվել է տեւական բանտարկությունից հետո) կինոկերպարը: Առաջին կինոնկարներից մեկը, որը նկարահանվել է Մարիա Ստյուարտի մասին, եղել է կինոարվեստի արշալույսին՝ 1895 թվականին: Այն կոչվում էր The Execution of Mary, Queen of Scots: Ռեժիսորն է Ալֆրեդ Քլարկը: Այն կարճամետրաժ համր կինոստեղծագործություն է՝ ընդամենը 18 վայրկյան տեւողությամբ, որը պատկերում է Մարիա թագուհու մահապատիժը: Չնայած ժապավենի պարզությանը, այն ահռելի մեծ նշանակություն ունի կինոյի պատմության համար, քանի որ այնտեղ առաջին անգամ են կիրառվել մոնտաժի հնարքն ու հատուկ էֆեկտները:

1920-ականներին՝ 1923 թ., էկրան է բարձրանում The Loves of Mary, Queen of Scots կինոնկարը, որտեղ ավելի շեշտադրվում են թագուհու անձնական կյանքն ու այնտեղ տեղ գտած սիրային դրամաները, դրանց հետ կապված քաղաքական ինտրիգները: Այստեղ արդեն առաջին անգամ էկրանին տեսնում ենք Մարիային ոչ միայն որպես թագուհի, այլ նաեւ մարդ՝ կին, իրեն հատուկ ապրումներով եւ զգացմունքներով, որոնք նույնիսկ պատմական ընթացքի վրա են ազդեցություն ունենում: Շոտլանդական թագուհու ողբերգական կերպարի զարգացման հարցում կարեւոր նշանակություն է ունենում 1971-ին էկրան բարձրացած Mary, Queen of Scots կինոնկարը, որի ռեժիսորն էր Չարլզ Զարոթը: Այս կինոնկարի առանցքում երկու զարմուհիների՝ Մարիա Ստյուարտի եւ Եղիսաբեթ 1-ինի պայքարն էր: Այն ոչ միայն քաղաքական, այլ նաեւ սիմվոլիկ մեկնաբանություն ունի՝ կանանց իշխանության երկու մոդելների պայքար: Այն նաեւ մեկնաբանվում է որպես «տղամարդկանց աշխարհում իշխանավոր կանանց պայքար»: Ուշագրավ է, որ պատմականորեն երկու զարմուհիներն իրականում երբեք չեն հանդիպել: Սակայն Զարոթն այս հարցում շեղվում է պատմականությունից եւ նրանց հանդիպումներն օգտագործում է որպես դրամատուրգիական հնարք: Սա էլ, թերեւս, ապացուցում է այն, որ կինոն ոչ թե պատմությունն է վերակերտում, այլ այն դարձնում է առավել արտահայտչական՝ հատկապես, երբ կան սուր կոնֆլիկտ եւ դիտարժանություն:

Մեր օրերում արդեն Մարիա Ստյուարտի կերպարը դառնում է առավել բարդ ու հոգեբանորեն ավելի խորքային: 2013-ին Թոմաս Իմբախի նկարահանած Mary, Queen of Scots կինոնկարում արդեն հանդիսատեսն աշխարհը տեսնում է հենց Մարիայի աչքով՝ փորձելով հասկանալ նրա կասկածները, վախերն ու ներքին ապրումները: Սա լիովին համահունչ է պատմական կինոյի ժամանակակից ընկալումներին, որտեղ շեշտը հերոսների ներաշխարհի վրա է դրվում: Ժամանակակից ամենահետաքրքիր էկրանավորումը 2018-ին Սիրշ Ռոնանի եւ Մարգո Ռոբիի Mary Queen of Scots-ն է, որտեղ պատկերված է Մարիա Ստյուարտի վերադարձը Շոտլանդիա եւ պայքարն անգլիական գահի համար: Առհասարակ, եթե հետեւենք կինոգետների կարծիքներին, ապա պետք է հստակ արձանագրենք, որ միջնադարյան Եվրոպայի այս ամենավառ անձանցից մեկի պատմական կերպարն ու կինոկերպարը խիստ տարբեր են, ու պատմական կերպարն ավելի շատ արդյունք է գեղարվեստական ստեղծագործության եւ միֆականացման համադրության:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ԹՈՌԸ ՖԻԼՄ Է ՆԿԱՐԱՀԱՆԵԼ ՊԱՊԻ ՄԱՍԻՆ

Բրիտանա-իտալական ռեժիսոր Կոզիմա Սփենդերը վավերագրական ֆիլմ է նկարահանել, որը նվիրված է իր պապին՝ աշխարհահռչակ նկարիչ



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արշիլ Գորկուն՝ հայտնել է «Ալֆանյուզը»: Ֆիլմը նկարահանվել է հատուկ ցուցահանդեսի համար, որը բացվել է Լոս Անջելեսի Hauser & Wirth պատկերասրահում եւ կգործի մինչեւ ապրիլի 25-ը: Arshile Gorky: Horizon West (2026) 23 րոպեանոց վավերագրական ֆիլմը պատմում է 1941 թվականի ամռանը Արշիլ Գորկու՝ Նյու Յորքից Կալիֆորնիա կատարած ճանապարհորդության մասին, որտեղ նրան ուղեկցում էին ապագա կինը՝ Ագնես «Մուգուշ» Մագրուդերը, եւ ճապոնացի նկարիչ Իսամու Նոգուչին: Ֆիլմը ստեղծել է Կոզիմա Սփենդերը՝ Peacock Pictures ծառայության, «Արշիլ Գորկի» հիմնադրամի աջակցությամբ եւ Hauser & Wirth պատկերասրահի հետ համագործակցությամբ: Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյան) ամերիկահայ նկարիչ է, աբստրակտ էքսպրեսիոնիզմի հիմնադիրներից: Նա 20-րդ դարի ամենաազդեցիկ ամերիկացի նկարիչներից է. նրա կտավները ցուցադրված են ԱՄՆ-ի բոլոր խոշորագույն պատկերասրահներում, ինչպես նաեւ՝ Լոնդոնի «Թեյթ» պատկերասրահում: Գորկին ծնվել է հայկական ընտանիքում՝ Վան քաղաքի մոտ գտնվող Խորգոմ գյուղում: 1915 թվականին՝ Հայոց ցեղասպանության ժամանակ, մոր եւ երեք քույրերի հետ գաղթել է Էջմիածին, հետո տեղափոխվել Երեւան: Մոր մահանալուց հետո Գորկին 1920 թվականին արտագաղթել է ԱՄՆ: Նա փոխել է իր անունը՝ դարձնելով Արշիլ Գորկի՝ ի պատիվ սիրելի գրող Մաքսիմ Գորկու:

Այս ընտրությունները ոչ թե Նիկոլի, այլ Նիկոլին հեռացնողի մասին պետք է լինեն

Երբ հետեւում ես, թե ինչ է կատարվում Հայաստանում ընթացող նախընտրական քարոզարշավի ծիրից ներս, հասկանում ես, որ այստեղ ամենազարմանալին ո՛չ նիկոլենց «ուրախ ավտոբուսն» է եւ ո՛չ էլ այդ ավտոբուսում տիրող երգի ու պարի մթնոլորտը: Այդ քարոզարշավի ամենազարմանալի մասը, թերեւս, Նիկոլին իշխանությունից հեռացնելու մասին հայրենի ընդդիմության ունեցած պատկերացումների պրիմիտիվությունն է:

Հարցն այն է, որ, ի տարբերություն Նիկոլի, որն արդեն իսկ հասկացել է, որ ինքն այլեւս կորցրել է առանց պետական ռեսուրսների, միայն ընտրություններով իշխանություն պահելու իր հնարավորությունը, ընդդիմությունն այդպես էլ չի հասկանում, որ այնքան, ինչքան Նիկոլը չի կարող առանց պետական ռեսուրսների, միայն ընտրություններով իշխանություն պահել, ճիշտ այդքան էլ ինքը չի կարող առանց փողոց ու ժողովրդական ճնշում գեներացնելու, միայն ընտրություններով Նիկոլից իշխանություն վերցնել:

Բայց սրանից ավելի վտանգավորը, թերեւս, այն է, որ այս ընդդիմությունը, այդքանը չհասկանալով հանդերձ, չի հասկանում նաեւ այն, որ հենց սա է իր ու Նիկոլի վարած քարոզարշավների տարբերությունը, որ հենց այստեղից է սկսվում իր քարոզարշավի նկատմամբ Նիկոլի քարոզարշավի առավելությունը:

Այո, այստեղից է սկսվում Նիկոլի քարոզարշավի առավելությունը: Այստեղից է սկսվում, որովհետեւ, ի տարբերություն ընդդիմության, որը Նիկոլին իշխանությունից հեռացնելը փողոցով ու ժողովրդական ճնշմամբ չի տեսնում, Նիկոլն իշխանությունը պահելու իր հնարավորությունը միայն պետության ուժով եւ ռեպրեսիաների գեներացմամբ է պատկերացնում:

Այս առումով, հայրենի ընդդիմությունը պետք է վերջապես գիտակցի, որ քանի դեռ Նիկոլի քարոզարշավի մտահոգությունը ոչ թե պարտվելը, այլ հետընտրական գործընթացները կառավարելն է, քանի դեռ իր քարոզարշավի առանցքը ոչ թե փողոցով ու ժողովրդական ճնշմամբ Նիկոլին հաղթելը կլինի, այլ ընտրությունների «ժողովրդավարական» նորմերին չհամապատասխանելն ապացուցելը, ինքն ինչպես եղել, այնպես էլ շարունակելու է ոչ թե Նիկոլին իշխանությունից զրկող ուժ, այլ նրան նոր կառավարություն կազմելու հնդուլգենցիա տվող գործիք լինել:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 20.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՏԱՍՆՅԱԿ ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ, ՄԻ ԿԱՅՔԸ ՆՈՐՄԱԼ ՉԵՆ ՊԱՀՈՒՄ

Պետական իշխանության մարմինները եւ համայնքապետարանները պետք է գործեն թափանցիկ, հաշվետվողական, որպեսզի քաղաքացիներն իրազեկված լինեն իրենց կյանքին վերաբերող որոշումներին: Այդ թափանցիկության, հաշվետվողականության, քաղաքացիների հետ իշխանության հետադարձ կապի ապահովման գործիքներ են պետական իշխանության մարմինների եւ համայնքապետարանների ինտերնետային կայքերը, որոնց ստեղծման, պահպանման, շահագործման համար աշխատողներ են ներգրավված, ֆինանսական միջոցներ են ծախսվում:

Խնդիրը դիտարկեմ կոնկրետ օրինակներով: Վերջին օրերին լրիվ դատարկվել է Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի համայնքապետարանի աշխատակազմի էջը: Նախկինում այդ էջում ներկայացված էին համայնքապետարանի աշխատակիցները՝ համայնքի ղեկավարից մինչեւ համայնքապետարանի հավաքարարներ, նրանց կոնտակտային տվյալները, լուսանկարները եւ այլն: Ի՞նչն է պատճառը, որ համայնքապետարանի աշխատակազմի անդամների վերաբերյալ տվյալներն անհասանելի են դարձել: Նախկինում հայտնել եմ, որ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Սարգսյանի դեմ կոռուպցիոն բնույթի քրեական վարույթ է հարուցվել, նա կալանավորվել է, գտնվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Կարող եմ ենթադրել, որ Արսեն Սարգսյանի վերաբերյալ տվյալները, նրա լուսանկարը Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեխնիկապես չեն կարողացել հեռացնել, ուստի համայնքապետարանի ողջ աշխատակազմի տվյալներն են հեռացրել:

Նման մի խնդիր, սակայն հակառակ բնույթի, առկա է նաեւ Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 3-ին որոշում է կայացրել՝ Յուրա Բազինյանին ազատել Տավուշի մարզպետի օգնականի պաշտոնից: Մարզպետի որոշումից անցել է ավելի քան 2 շաբաթ, սակայն մարզպետարանի ինտերնետային կայքում որպես մարզպետի օգնական նշված է Յուրա Բազինյանը, ներկայացված են նրա լուսանկարը, կենսագրությունը, կոնտակտային տվյալները: Ըստ երեւույթին, մարզպետի աշխատակազմում չեն կարողանում տեխնիկապես լուծել Յուրա Բազինյանի տվյալները մարզպետարանի կայքից հեռացնելու հարցը: Մարզպետարանի կայքից տեղեկանում եմ, որ մարզպետ Ղալումյանը մարտի 6-ին որոշումներ է ընդունել՝ Լալա Ղուկասյանին Հովքի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից ազատելու, Սեդա Ասիրյանին այդ դպրոցի տնօրեն նշանակելու մասին: Սակայն մարզպետարանի ինտերնետային կայքի «Կրթական կազմակերպություններ» բաժնում Լալա Ղուկասյանը դեռ նշված է որպես Հովքի դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Նման խախտումներ կան նաեւ Տավուշի մարզպետի՝ ավելի վաղ կայացրած որոշումների առնչությամբ: Ըստ մարզպետարանի ինտերնետային կայքի՝ 2025թ. սեպտեմբերի 10-ին մարզպետ Ղալումյանը որոշումներ է ընդունել Անուշ Օհանյանին Ոսկեվանի միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից ազատելու, Սերյոժա Միքայելյանին՝ այդ դպրոցի տնօրենի ԺՊ նշանակելու մասին: Սակայն մարզպետարանի կայքի «Կրթական կազմակերպություններ» բաժնում ներկայում որպես Ոսկեվանի միջնակարգ դպրոցի տնօրենի ԺՊ է նշված Անուշ Օհանյանը: Նրան այդ պաշտոնից ազատելու մասին մարզպետի որոշումից անցել է ավելի քան կես տարի, ինչո՞ւ 6 ամսում կայքի վերոհիշյալ բաժնում փոփոխություն չի արվել: Մարզպետարանի կայքում սխալները բազմաթիվ են: Տավուշի մարզպետի աշխատակազմն այժմ ունի 66 աշխատող, ռեսուրսներն առավել քան բավարար են՝ մարզպետարանի կայքը նորմալ աշխատեցնելու համար:

Հավելենք նաեւ, որ 2025-ին Տավուշի մարզպետի աշխատակազմը պետբյուջեից ստացել է ավելի քան 65 միլիոն դրամ, 2026թ. մարտի 6-ի դրությամբ՝ 15 միլիոն 210 հազար 500 դրամ պարգեւավճար: Ինչո՞ւ են այսքան պարգեւավճար ստանում, եթե իրենց գործը չեն անում, գոնե մարզպետարանի ինտերնետային կայքը չեն թարմացնում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am